

Yuey Yueh Yueh people -
Sulemle Daghankay
Sapejne

ՀԻՄՆՈՒԱԾ 1906 ԽՆ

ՀԱՅԿԱԿԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ



ՏԵՂԵԿԱԳԻՐ 5^{րդ} ՇՐՋԱՆԻ

(1 ՄԱՅԻՍ — 31 ԴԵԿԵMBER 1910)



361
Հ-25

25
Printed in Turkey

361
Հ-25 ան

ՀԱՅԿԱԿԱՆ

ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 1906 ԻՆ

ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ —

Գ. Ա. Հ Ի Ռ Ե (Ե Գ Ի Պ Տ Ա Ս)

10, Նուպար Փառա Փողոց

ՏԵՂԵԿԱԳԻՐ 5^{րդ} ՇՐՋԱՆԻ

(1 Մայիս — 31 Դեկտեմբեր 1910)

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա. Եւ Հ. Տ Ե Ր - Ն Ե Ր Ս Ե Ս Ա Ն

Կ. Պոլիս

ԱՐԴՅՈՒՆԱԿԱՆ

ԱՐԴՅԱԿԱՆ ԺՈՂՈՎ



1990

30

Հաշուելինիք

Տիւր է. ՓԱՓԱԶԵԱՆ

Truismsn't

ԳՐԵՑԻ ԼԻՇՆԵ

(*) Տ. Տիրան Փիլիպպոսեան Կեղը. Վարչ. Ժողովի անդամ ընտրուած է Բնդհ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԲՈՐԵԳ. ԲՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

ԵՐՐՊՊՐՎ ՆԻՍ

Երկրորդ հրաւերի վրայ

(17 Ապրիլ 1911)

ՕՐՈՒՅՐՎԱ

1. — 5րդ Շրջանի Տեղեկագիր եւ վատերացում Հաշուելշինի (1 Մայիս — 31 Դեկտեմբեր 1910).

2. — Զանազան առաջարկութիւններ:

Այսօր, Երկուշուրթի, տասնըեռթը Ապրիլ հազար ինը հարիստամնըէկ, ժամը հինգին (յ.մ.), Դահիրէ, Պուլագի Ազգ. Վարժարանի ժողովարանին մէջ, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Ընդհանուր Ժողովը, որ 2 Ապրիլ 1911ի օրը նկատ հրաւիրուած՝ բայց Կանոնագրին 19րդ Յօդուածին (Հատուած Է.) տրամադրած մհծամանութիւնը գոյացած չըլլալուն համար յետաձըդուած էր, իր երրորդ նիսաը գումարից յիշեալ յօդուածին համաձայն՝ Երկրորդ հրաւէրի վրայ:

Դիւանը կազմուեցաւ հետեւեալ կերպով՝

Ա. Թենապետ — ՎՍԵՄ. ՊՕՂՈՍ ՓՈՇՈ. ՆՈՒՊԱՐ. Ա. պետ. Կեդր. Վարչ. Ժողովի.

Ա. Թենադպիր — ՓԱՍ. Վ. ՄԱԼԵԶԵԱՆ. Ա. դպիր. Կեդր. Վարչ. Ժողովի.

Ա. Թուէխոյզ — ՏԵՂԲ. ՍԵԴՐԱԿ. ԴԱՒԹԵԱՆ եւ Ա. Ա. Ա. Ք. ՓԱՓԱԶԵԱՆ :

Ատենապետը ներկայացուց 4 Ապրիլ 1911 թուական Լուսաբեր-
Արեւի 963 թիւը՝ որուն մէջ հրատարակուած է երկրորդ հրաւիրա-
գերը:

Ներկայութեան տումարէն յայտնի եղաւ որ ներկայ և ներկա-
յացուած անդամներուն թիւը 23 է, 138 ձայնի իրաւունքով:

Ժողովը կանոնաւորապէս հրաւիրուած և գումարուած ըլլալով՝
ըստ կանոնագրի 19րդ Յօդուածին, Ատենապետը կը հրաւիրէ Ամե-
նագլուխը կարդալ կեղը. Վարչ. Ժողովին ութամսեայ Տեղեկագիրը
և 1 Մայիս — 31 Դեկտեմբեր 1910 Շրջանի Հաշուեկիուը:

ՀԱՄԱՐԱՏՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ

ՏԵՂԵԿԱՆԱԿԱՐ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉ. ԺՈՂՈՎԻ

(5րդ. Շրջան, 1 Մայիս — 31 Դեկտեմբեր 1910)

ՏԵՍՔ,

Անցեալ տարի 8 Մայիսին գումարուած Ընդհանուր Ժողո-
վը մեր կանոնագրին 2 րդ. Յօդուածը բարեփոխած և որոշած ըլ-
լալով որ այնուհետեւ Միութեան տարեշրջանը պէտք է սկսի ամէն
տարուան Յունվար մէկին, փոխանակ Մայիսի, վերջին Շրջանը՝
որուն համարատութիւնը պիտի ներկայացնենք ձեզի այսօր՝ բա-
ցառապէս ութր ամսուան ժամանակամիջոց մը միայն բոլորած է,
1 Մայիսէն 31 Դեկտեմբեր 1910: Հարկ է ուրեմն հաշիւներու-
քնութեան առթիւ, աչքի առջեւ բերել որ անոնք կը վերաբերին
կարճառօտ շրջանի մը, որ՝ ասկէ զատ՝ զո՞ր գաղիպած է ամառնա-
յին եղանակին հետ. — մեր Ընկերութեան գործունէութեան տե-
սակէտով էն քիչ նպաստաւոր եղանակը:

Այսուհանդերձ, Միութեան բարգաւաճումը այդ պատճա-
ռու պակաս արագ և ուշագրաւ եղած չէ, եւ մենք երջանիկ ենք
հաստատելով որ մեր ձեռնարկը այդ աստիճան մեծկակ ծաւալում
մը երբեք չէր ստացած մինչեւ այսօր:

Այս վերջին Շրջանին միջոցին, առաջին անգամ ըլլալով,
յաջողեցանք մեր հասոյթներուն մեծագոյն մասը յատկացնել կը բ-
թութեան և հողաղործութեան յատուկ նպաստներու, ամէնէն ա-

ւելի վնասուած վայրերու մէջ՝ որ եւ ամէնէն շատ երեսի վրայ ձգուածներն ալ էին :

Այսպէս, ինչպէս որ ներկայ Տեղեկագրին յարակից հաշուեկրտներէն և ցուցակներէն ալ կը հետեւի, Մասնաճիւղներուն եւ գործօն անդամներուն թիւը, որով Միութեան սովորական եկամուտներուն գումարը՝ գրեթէ կրկնապատկուած է, իսկ մեր Դրամագլուխը աւելի քան 6000 եգիպտ. Ոսկիի յաւելում մը կրած է մեր վերջին Տեղեկագրին իվեր : Այս իրողութիւնը ճշգրիտ գաղափար մը կուտայ արդէն ձեզի այն խանդալառ ընդունելութեան մասին զոր մեր Ընկերութիւնը կը գտնէ մարդասէր ազգայիններու մօտ :

Այս համակրալից վերաբերումը կը բացատրուի այն ծառայութիւններով զոր Միութիւնը կրցաւ մատուցանել իր հայրենակիցներուն՝ կնճռալից վայրկեաններու մէջ, և մասնաւորապէս կիլիկիոյ վերջին ցաւալի աղէտքին առթիւ, ինչպէս նաև իր գծած և հետեւած ուղղութեամբ՝ ուրկէ բնաւ չէ շեղած, և որ կը նուիրագործէ իր յառաջդիմական և գոյապէս մարդասիրական նպատակը, դնելով ինքը դաւանական և այլ խարական նկատումներէ բարձրու գերիվեր :

Հաւատարիմ այն ոգիին որ վարած է իր հիմնադիրները, մեր ձեռնարկը աւելի քան երբեք ջանադիր եղած է իր շուրջ համախմբելու ամէն դասակարգի և ամէն կուսակցութեան պատկանող հայերը, առանց կարծիքի եւ գաւանանքի տարբերութեան, եւ ապահովելու անոնց միութիւնը բարեգործական գետնի վրայ :

Մեր բարեկամները լաւ գիտեն նպատակը զոր կը հետապնդենք. անոնք գիտեն, ինչպէս որ բազմից կրկնած ենք մեր Տեղեկագրիներուն մէջ և ինչպէս որ բացարձակ տրամադրութիւնն է մեր կանոնագրին, թէ՝ Միութիւնը կ'աշխատի միայն և միայն հայութեան տնտեսական, մատարական և բարոյական բարօրութեանը, քաղաքական ուեէ գործունէութենէ անկախ կերպով : Զեռք բերուած արդիւնքները որոշապէս ցոյց կուտան որ մեր առաջին չանքերը լայնորէն յաջողած են, և առով իսկ պերճախօսօրէն կը պատասխաննեն այն յարձակումներուն՝ որոնց դժբախտարար մերթընդ՝ մերթ առարկայ եղած է Միութիւնը

Հիմա պարտաւորութիւնը ունինք մեր անկեղծագոյն չնոր-

հակալութիւնները յայտնելու ամէն անոնց՝ որ իրենց աջակցութիւնը նուիրեցին մեզի վերջին Շրջանին միջոցին, ոմանք Մասնաճիւղներու կազմութեան նախաձեռնարկ ըլլալով, ոմանք Միութեան զըրկելով անդամակցութեան կամ նուիրատութեան ցուցակներ, եւ վերջապէս ոմանք ալ՝ խօսքով և զիրով անոր տարածումին աշխատելով դրապէս :

Նիւթապէս անկարելի է մեզի միառմի անուանել բոլոր այն Ընկերութիւնները, բոլոր այն Մարմինները և բոլոր այն անձնաւորութիւնները որ ազնուութիւնը ունեցան իրենց աշխատակցութիւնը չնորհելու մեզի և իրենց բարեացակամ գնահատումներովը խրախուսելու մեզ : Բայց չենք կարող մեր խորին երախտագիտութիւնը յատկապէս չարտայայտել կիլիկիոյ Շնորհ : Աահակ Բ. Կաթողիկոսին և Հայկաթուլիկի կ. Պատրիարք Գերեզ . Պօղոս Պետրոս ԺԳ. ի՝ որ բարեհաճեցան, իրենց կոնդակներովը, գնահատել մեր Ընկերութեան ազգօգուտ հանդամանքը եւ անդամներուն զրկել իրենց օրհնութիւնները :

Նոյնպէս չնորհապարտ զգացումներով կ'ուզենք յիշատակել Հայոց Միացեալ Ընկերութեանց հաճոյակատար աշխատակցութիւնը մեր կրթական նպատակին գործադրութեանը մէջ : Այս պատուական հաստատութեան Տնօրէն Փողովը, որուն հետ ջանացինք սրտագին յարաբերութիւններ հաստատել, սիրայօժար յանձն առաւ մեր հաչուոյն կառավարել այն քսան նախնական դպրոցները՝ զոր վերջերս հիմնեցինք բնագաւառին մէջ, ինչպէս եւ Զոք-Մարզուանի Քէլէկեսն Որբանոցը եւ Վանի Վարժապետանոցը՝ որոնց հիմնարկութիւնը հաւանարէն տեղի պիտի ունենայ յառաջիկայ աշնան :

Կը մնայ մեզի Միութեան բրօբականտային նկատմամբ ձեր ուշադրութիւնը հրաւիրել : Ամէն առիմիւ չի թերացանք հասարակութիւնը իրազեկ ընելու, այնքան կանոնաւորապէս որքան կարելի էր, Միութեան զլիսաւոր գործառնութեանց, ըլլայ աղգալին մամուլին յուղեալ հաղորդագիրներով, ըլլայ մեր Տեղական Մասնաժողովներուն ա տուկ զեկոյցներով եւ շրջաբերականներով : Բայց կը խոսանվանինք որ մեր միջոցները չի ներեցին ցարդ կազմակերպելու մեր բրօբականտանք այսքան կարեւոր ձեռնարկի մը անհարժեշտ լրջութեամբը : Փորձառութիւնը ցոյց տուաւ մեզի քանի մը կարգադրութեանց պէտքը, ինչպէս՝ օրինակի համար՝ ամսաթերթի մը հրատարակութիւնը

եւ վճարեալ քննիչ -պատուիրակներու անուանումը, թէ՛ մեր Ընկերութեան բրօրականստային հետամտելու եւ թէ՛ զրկուած նպաստներուն եւ Միութեան դպրոցական, գիւղատնտեռական եւ արհեստագործական գանհաղան ձեռնարկներուն հսկողութիւնը կատարելու համար: Այս մասին սկսած ենք քանի մը միջոցներ ձևոք առնել, եւ տարակոյս չունինք թէ որոշուած կարգադրութիւններու մասին համամիտ գտնուելով մեր հայեացքներուն՝ պիտի վաւերացնէք անոնք:

Միութեան վերջին 5 րդ Շրջանին ելմտական գործողութեանց և իր ներկայ կացութեան համարաստուռթիւնը ձեզի ներկայացնելէ առաջ, հաճոյք ունինք հաղորդելու ձեզի թէ՝ Օսմ. Սահմ. կառավարութիւնը նպաստաւոր ընդունելութիւն ըրաւ օրինական այն յայտարարութեան՝ որ Միութեան անունով ներկայացուեցաւ մեր կ. Պոլիսի Տեղական Մասնաժողովին միջոցաւ, եւ ինչան վաւերաց- ման՝ Ծնկերակցութեանց նոր Օրէնքին արամադրութեանց համաձայն՝ յանձնեց մեզի Միութեան կանոնագրին աւանդագիրը, 131 թիւ եւ 3 Մարտ 1910 թուական :

የኢ.ፌ.ዲ.ሪ. የኢትዮጵያ ሪፖርት

Խնչպէս զիտէք, Միութեան Դրամագլուխը կը բաղկանայ Հիմնական Դրամագլուխէն՝ որ կանոնագրին Յրդ Յօդուածին համաձայն անձեռնմխելի է, եւ կանխորոշ նպատակներու յատկացուած Դրամագլուխէն՝ զոր այսուհետև հակիրճօրէն պիտի յորջորջենք «Մասնաւոր Դրամագլուխ», և որ կը գոյանայ Միութեան եղած կուակներէն և նուիրատութիւններէն. ասոնք ըստ նուիրատոններու փափին՝ միայն և միայն կը գործածուին իրենց կողմէ բացայատօրէն կանխորոշուած նպատակնեսան.

1. — Վերջին ութամսեայ Շրջանին մէջ Հիմնական Դրամա-գլուխի Հաշիւին անցուած զումարները հետեւեալ կերպով կը ման-բամանուին.

ամբողջը կողմէ արտաքսուելու վրայ եղող կարօս ազգայիններուն, 29,250 Ե. Ո. ի նոր յաւելում մը բարդուեցաւ և ամրողութեամբ գործածուեցաւ այդ հողերուն գնումին։ Այս կալուածին փոխանուգումը այս օրերս իսկ կը կատարուի կեղը. Ժողովիս Ատենապետին անուանը։

Աւելցնենք նաև որ Մասնաւոր Դրամագլուխի Հաշուոյն արամաղրելի գումարները ես, Ե. Ո. 1.510,143, քաղ.քիս Դրէտի կիսնէ դրամատան մէջ պահ դրուած են։

ԵԿԱՄՈՒԽԾԻ ՀԱՇԻԽ

Եկամուտի Հաշիւը կը բաղկանայ, ըստ կանոնազրի, անդամավճարներուն 5/6 էն և Հիմնական Դրամագլուխի Հաշիւը գոյացնող արժեթուղթներու տոկոս եւ կարօններուն փոխարժէքն. հետեւաբար արտակարգ հասոյինները այդ հաշիւին մէջ չեն մտներ։ Եկամուտի հաշիւը, միեւնոյն ուժամսուայ Շրջանին համար, այսպէս կ'ամփոփուի։

Անդամավճարներուն 5/6ը	Ե. Ո. 2.061,713
Արժեթուղթներուն տոկոս և կարօնները (*) . . .	» 204,900
<hr/>	<hr/>
5րդ. Շրջանին Եկամուտ Համագումարը . .	Ե. Ո. 2.266,613

Աւելցնելով 30 Ապրիլ 1910ին մնառուկը պատրաստ գտնուած մնացորդ գումարը (գեղջելէ վերջ Ե. Ո. 73,125, Արքալուի հողերուն գումարն յատակացուած պահեստի գումարը)	» 480,273
<hr/>	<hr/>
Համագումար . . .	Ե. Ո. 2.746,886

Այս Ե. Ո. 2.746,886 էն՝ Ե. Ո. 1.795,500 ի գումար մը դանուզան նպաստներու գործածուած է։

Մեր Մասնաճիւղներէն շատերը գեռ նոր հիմուտած և բազմաթիւ անդամացուցակներ տարւոյն վերջը միայն մեղի հասած ըլու

(*) Պէտք է նկատի առնել որ կարօններուն մեծագոյն մասը Մարտ, Ապրիլ և Մայիս ամիսներուն մէջ գանձելի է, որով վերջին Շրջանին մէջ նշանակուած չէ։

յալով, անդամավճարներէ գոյացած յաւելումը յառաջիկայ համարատուութեանց մէջ միայն կարելի պիտի ըլլայ տեսնել։ Այս անդամավճարները այսօր կը հասնին, մինչեւ 31 Դեկտեմբեր կեդրոն դրկուած անդամացուցակներուն նայելով, ամսական Ե. Ո. 450,110ի։

ԵԼՄԾԱԿԱՆ ԲՆԴԱՆՈՒԻՐ ՎԻՃԱԿ

ինչպէս ըսուեցաւ, Հիմնական Եկամուտի Հաշիւին	
համագումարն է	Ե. Ո. 2.746,886
ուրկէ զեղջելով զրկուած նպաստները՝	
որուն ցուցակը ստորեւ.	Ե. Ո. 1.795,500
և եղած Ընդհանուր Ծախքերը.	» 816,514 2.612,014
31 Դեկտեմբեր 1910ին մնացուկին մնջ պատրաստ դրամ՝	
նոր նպաստներու վերապահուած	Ե. Ո. 134,872

ԲՆԴԱՆՈՒԻՐ ԾԱԽՔ

Վերջին Շրջանին ծախքերուն մանրամասնութիւնն է՝	
Պաշտօնեաներու թոշակ, վարձք, ընդհ. բրօբականտայի	
և Կեդր. Վարչութեան զանազան ծախք	Ե. Ո. 234,675
Տեղեկագիր, Կանոնագիր, և այլ տպագրական ծախք	» 75,850
Թղթակցութեան և գրամական առաքումներու	
ծախք, աճիօ և այլ մանր պիտոյքներ	» 74,800
Մասնաճիւղներու ծախք	» 431,188
<hr/>	<hr/>
Համագումար	Ե. Ո. 816,513

Մեր ծախքերը բնականաբար կ'աւելնան քանի Միութիւնը կ'ընդարձակուի, սակայն հարկ կը սեպենք դիտել տալ որ այս ծախքերը, որ, բացի Կեդր. Վարչութեան եւ տեղական Մասնաժողովներու

Ընդհանուր ծախքերէն, կր պարունակէ նաև բազմազան նպաստներու հակակիորին, ինչպէս եւ հետզհետէ մեծ կարեւորութիւն մը ստացող կտակ և նուիրատութիւններու տևաչութեան յարակից ծախքերը, բայ ինքեան զգալապէս նուազելու վրայ են՝ թէ որ համեմատուին Միութեան Հիմնական և Մասնաւոր Եկամուտներուն օրբստորէական արագ աճումին հետ :

Կ Պ Ա Ս Տ Ն Ե Բ

Ակնարկելով վերջին տիրառիթ պատահարներուն և բնագաւառի հայ ժողովուրդին աւելի կամ պակաս մշտական թշուառութեանը, մեր վերջին Տեղեկագրին մէջ փափաք կը յայտնէինք որ այլեւ՝ ինչպէս անցեալին մէջ՝ միակ հոգո չունենայինք, սպառիչ և աղերախտ հոգը, օգնելու սովորակիրու և աղէտեալներու նիւթական կարօտութեանց, այլ կարենայինք յատկացնել մեր նպաստներուն մոհագոյն մասը՝ կրթական նոպատակին, ինչպէս և աշխատութեան ու արդիւնաբերան նորանորաւութիւններու կանուական գործին:

Բարեախտութիւնը ունինք այսօր յատարարելու թէ անցող Շրջանին մէջ կրցանք, հաւատարիմ Միութեան որդեգրած զիսաւորագոյն առաջադրութեան, կեղրոնացնել մեր ջանքերն ու նպաստները կրթութեան ծաւալումին՝ մասնաւորապէս կղզիացեալ եւ ընդհանրապէս երեսի վրայ ձգուած վայրերու մէջ, ինչպէս և մեր դժբախտ հայրենակիցներուն տնտեսական վիճակին բարելաւումին։ Արդարեւ, Ե. Ո. 1,795,500ի հասնող նպաստներուն 1,150,050 Ե. Ոսկին գործածուած է կրթութեան և Ե. Ո. 477,750ի գումար մը բաշխուած է հաւաքարար կարօտ աշխատաւորներու և հողագործներու։ Համոզուած ենք որ կրթութեան և հողագործութեան չնորհիւ է որ Հայութեան ճակատագիրը բարոքել կարելի պիտի ըլլայ։

Հիմա կը մնայ մեզի քանի մը խօսք զուրցել նպաստի խնդրանքներու մասին եւ ասոնց բաշխումին համար կատարուած հսկողութեան վրայ։

Նպաստի խնդրանքներուն օրէօր տարապայման շատնալուն և,

միւս կողմէ, աւելի կամ նուազ անկանոն եւ ոչ ապահովիչ եղանակին պատճառաւ՝ որով ընդհանրապէս այդ խնդիրքները կը ներկայացուին, հարկադրուած ենք լուրջ նկատողութեան առնել այն խնդրագիրները մանաւանդ՝ զոր մէր Տեղական Մասնաժողովները կամ Վիճակին կրօնական պետերը վաւերական վկայութիւններով կը յանձնարարեն։ Հետեւարար, նպաստակայարմար կը համարինք խորհուրդ տալ ամէն անոնց որ ուեւ նպաստի խնդրանք մը ունին ներկայացնելիք, իրենց խնդրագրին կցել պաշտօնական վկայագիրներ, և կէտառկէտ հետեւիլ այն հրահանգներուն՝ զոր մէր 25 Մայիս եւ 30 Յունիս 1910 թուական շրջաբերականներով հրատարակեցինք։

Գալով նպաստներու հակակիորին, մեր միջոցները թոյլատու չեղան տակաւին տեղւոյն վրայ իսկ կազմակերպելու լուրջ հսկողութիւն մը, — բան մը որ այսպիսի կարեւոր ծառայութեան մը յատուկ քննիչներու կը կարօտի. բայց կ'ուզենք վեր հանել թէ վինտուեցինք ամէնէն աղղեցիկ դրութիւնը, կարենալու համար լաւ մը քննել խնդրուած նպաստին օգտակարութիւնը և ստիպողականութիւնը, եւ աւելի լաւ ստուգելու անոր գործածութիւնը՝ համաձայն անոր ընկերացող բացայատ հրահանգներուն։ Մեր Տեղական Մասնաժողովները այսուհետեւ մեր լաւագոյն օրկանները պիտի ըլլան՝ նրապաստներու խորհամիտ բաշխումին մէջ մեզի ձեռնհասորէն օպնելու համար, այս մասին ոչ նուազ գրած ենք մեր յոյսը իւրաքանչիւր հասարակութեան կրօնական իշխանութեանց օժանդակութեանը վրայ, որ մինչեւ այսօր արդէն բնաւ չի մերժուեցաւ մեզի։


Ահաւասիկ Հիմնական Եկամուտի հաջուէն վերջին Շրջանին մէջ զրկուած զանազան նպաստներուն ցուցակը։

ՑՈՒՑԱԿ ՆՊԱՍՏԵՐՈՒ

(1 ՄԱՅԻՍ — 31 ԴԵԿԵMBER 1910)

		Ե. Դ.
I. — ԿԱՐՈՏԵԱԼՆԵՐՈՒ.		
Սատանա	Գերերջ. Պողոս Պետրոս Ժ. կ. Պատրիարք	9.750,—
Արքաքիւր	Ազգ. Պատրիարքարան	1.950,—
Զմէկածագ	" " " " "	1.950,—
Բառուզակ	(Զարսաննազ) Ազգ. Պատրիարքարան	1.170,—
Քէսապ	Գեր. Շ. Վարդ. Գասպարեան (Հալէպ)	1.950,—
	Համագ. կարօտեալներուն նպաստներուն Ե. Դ.	16.770
II. — ԿՐԹԱԿԱՆ.		
Քէսապ	Արժ. Աթիքեան քահ.	2.925,—
Մարաս	Գեր. Մ. Եպիսկ. Վեհապետեան (†)	5.850,—
Տարենէտ	Գեր. Թ. Եպիսկ. Գուշակեան (Սըվազ)	5.850,—
Գոչ. Հիսար	" " " " "	1.950,—
Գարանուրան	Գեր. Շ. Վարդ. Գասպարեան (Հալէպ)	1.462,50
Էզինէց	Գեր. Շ. Վարդ. Գասպարեան (Հալէպ)	1.462,50
Կ. Պօլիս	Դպրոցաէր Ծիկնանց Ընկ.	4.875,—
Ալան	Կեղր. Հայկազեան Վարժարան	4.875,—
Կ. Պօլիս	Միացեալ Ընկ. Հայոց (Միութեան 20 նախնական վարժարաններուն վեցամսեայ).	14.625,—
Զէյրուց	Կեղրոնական Վարժարան	7.800
Ազիլիկ	Գեր. Թ. Եպիսկ. Գուշակեան (Սըվազ)	1.462,50
Խօրասան	" " " " "	2.925,—
Ասօփի	" " " " "	1.170,—
Սիննան	" " " " "	2.925,—
Խուռանավիլ	" " " " "	1.462,50
Էզրէզ	" " " " "	1.170,—
Պրունգալա	Գեր. Խորէն Վարդ. Դիմաքսեան (Յօզդատ)	1.950,—
Ռումիլիին	" " " " "	1.462,50
Լաքաքիա	Գեր. Մ. Վարդ. Ասկերիչեան	1.950,—
Կ. Պօլիս	Ազգանուրէ Հայուհեաց Ընկ.	4.875,—
Աթանա	Հայ. Կաթողիկ Որբանոց	1.950,—
Կ. Պօլիս	Միացեալ Ընկ. Հայոց	9.750,—
Արքաքիւր	Ազգ. Պատրիարքարան	1.950,—
Զմէկածագ	" " " " "	1.950,—
	Փոխադրելի	88.627,50

		Ե. Դ.
	Փոխադրեալ	88.627,50
Քէսապ	Գեր. Շ. Վարդ. Գասպարեան (Հալէպ)	1.950,—
Պիրէնիկ	" " " " "	1.950,—
Հիւսէյնիկ	Արժ. Վ. Քահ. Ավանեսան (Խարբերդ).	2.437,50
Խարբերդ	(Մանկապարտէզ) Արշալոյս Հայունեաց Ընկ.	975,—
Թամզարա	Գեր. Թ. Եպիսկ. Գուշակեան (Սըվազ)	2.925,—
Ակն	Արժ. Պ. Քահ. Գասեան.	2.925,—
Թէլէրմէն	(Մէրտին) Հայ. Կաթոլիկ Կ. Պատրիարքտան	4.875,—
Աւախսրան	(Կիլիկիա) " " " " "	
Նոր-Շէն	(Մոռշ) " " " " "	
Հաճըն	Ազգ. Որբանց (Շնորհ. Սահակ. Բ. Կաթ. Կիլիկիոյ) Կրթական հաստատութեանց ի նպաստ լրագրական բա- ժանորդագրութիւն.	7.800,— 540,05
	Համագումար կրթական նպաստերու.	Ե. Դ. 115.005,05
<hr/>		
III. — ԶԱՆԱԶԱՆ.		
(Աշխատանիք, Երկրագործութիւն, Առողջապահութիւն եւն.)		
Մուս	(Եղ եւ սերմնցու) Գեր. Ն. Եպիսկ. Խարախանեան	24.375,—
Նախարարու	(Եղ եւ սերմնցու) Շնորհ. Սահակ Բ. Կաթողիկոս Կիլիկիոյ)	9.750,—
Զէյրան	(Հիւսնդներուն դեղ) Շնորհ. Սահակ Բ. Կաթողիկոս Կիլիկիոյ.	975,—
Հաճըն	(Հիւսնդներուն դեղ) Շնորհ. Սահակ Բ. Կաթողիկոս Կիլիկիոյ	975,—
Կեմերէկ	Գեր. Թ. Եպիսկ. Գուշակեան (Սըվազ)	1.950,—
Տալվարիկ	Գեր. Ն. Եպիսկ. Խարախանեան (Մոռշ)	6.825,—
Պայտագիտ	Արժ. Ն. Քահ. Քաշրերունի	2.925,—
	Համագումար զանազան նպաստերու	Ե. Դ. 47.775,—
<hr/>		
Համագումար ընդհանուր նպաստերու		
		Ե. Դ. 179.550,05



Վերոյիշեալ Ե. Ո. 1.795,500ի գումարին մէջ է նաև Ե. Ո.
29,250ի նպաստը՝ որ, Քէսապի Ազգ. Վարժարանին յատկացուած ըլլալով, մեր 30 Ապրիլ 1910ի Հաշուեկիւթին մէջ՝ վերեւ պահեստի գումար՝ Դրամագլուխի Հաշիւխն անցուած էր, եւ որ վերջ իվերջոյ նպաստներուն հաշւոյն փոխադրուեցաւ՝ ինչպէս վերը բացատրեցինք:
Իսկ այդ համագումարին մէջ չիկան հետեւեալ նպաստները.
Հաճըն. — Ն. Վարդ. Դանիէլեան (Կանանց Աշխատ. Ե. Ո. 39 տանքի Տան համար)
Հաճըն. — Ն. Վարդ. Դանիէլեան (Շար-Տէրէի գիւ. զին Ազգ. Վարժարանին բացումին համար) » 14,625
Հալէպ. — Շ. Վարդ. Գասպարիան (Վիճակին կա- րու Վարժարաններուն համար) » 14,625
Համագումար. Ե. Ո. 67,250

Սոյն Ե. Ո. 67,250ի գումարը, որուն մանրամասնութիւնը կը գտնուի մեր վերջին Տեղեկագրին «Նուիրատուութիւն» գլուխին մէջ, կը բաղկանայ՝ 1. — Ե. Ո. 39 է, այսինքն Մանչէսթրի Հայուհեաց Միութեան նուիրած 80 Անգլ. Ոսկին կէսը (այս նուէրը յատկացուած էր Անտիոքի մէջ ծրագրուած Աշխատանքի Տան՝ որ վերջը չի բացուեցաւ) ու 2. — Ե. Ո. 28,250 է, մնացորդը Ե. Ո. 41,437ի գումարի մը՝ որ զրկուած էր Անտիոքի կարօտեալներուն ինպաստ և որուն մէկ մասը միայն այդ նպաստակով գործածուած էր:

ԲՆԴԱՆՈՒՐ ՔԱՂԱԽԸ

ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵՆՔՆ ԻՎԵՐ ԴՐԿՈՒԱԾ ԱՅԼԱԶԱՆ ՆՊԱՍՏՆԵՐՈՒ

Աչքի առջև բերելով վերեւ նշանակուած, ինչպէս և մեր վերջին Տեղեկագրին մէջ դրուած թուանշանները, պիտի տեսնէք որ Միութիւնը, իր հիմնարկութիւնն ի վեր (1906), իրաւ նպաստ և ամենապղի օժանդակութիւն, մինչեւ այսօր բաշխած է Ե. Ո. 16.106,421ի համագումար մը, որուն մանրամասնութիւնն է:

1. — Իր Հիմնական Եկամուափին արդիւնքովը , Ե. Ո. 5.894,036
2. — Իր Մասնաւոր Եկամուափին արդիւնքովը , այսինքն՝ Ա. Կանխորոշ նպաստակի համար եղած նուիրատուութեանց արդիւնքովը . . . » 3.722.288
Բ. Հանգանակութեանց արդիւնքովը . . . » 6.490,097
Համագումար նպաստներու ցախօր . . . Ե. Ո. 16.106,421

ԿԾԱԿՆԵՐ ԵՒ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆԵՐ

Ա. — ԿՏԱԿՆԵՐ.

1. — Մեր ազգային ականաւոր գրագէտներէն մին, Տ. Մերոպանուակրեան, իր համակրանքին ու վստահութեան ապացույցը տուած մեզի, Միութեան կառակելով իսանութ մը՝ Իզմիրի Եօլ - Պէտէսթէնի մէջ՝ 500 Օսմ. Ոսկի արժողութեամբ, որուն սնիքնականութեան փոխանցումը մատերա տեղի պիտի ունենայ Ժողովիս Ասենապետին անուանը սոյն քաղաքի մեր Մասնաժողովին միջոցաւ. (*) :

Կը ներկայացնենք Տ. Մ. Նուակրեանին մեր չնորհապարտ ըգա-
գացումները, եւ բարեբախտ ենք ընդունելու ինքը մեր Պատույ
Անդամներու շարքին մէջ:

2. — Շնորհակալութեամբ ընդունեցանք նաև, մէր Իզմիրի Մանաժողովին միջոցաւ, 30 Օսմ. Ոսկի գումար մը՝ արդիւնք Մշեցի գործաւորի մը Մուշեղ Ներսէսանի կատակին: Հանգուցեալին փափաքին համաձայն՝ սոյն գումարը զրկնցինք Մուշի Սուրբ Առա-
քելոց Վանքին Որբանոցին:

(*) Վերջին պահուն՝ իզմիրի Տեղական Մասնաժողովը կը հաղորդէ մեզի որ օրինական փոխանցումը կատարուած է, եւ թէ ծախքերը հոգացուած են ազնուասիրտ նուիրատուին կողմէ:

Բ. — ԿԱՆԽՈՐՈՇ ՆՊԱՏԱԿԻ ՀԱՄԱՐ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ.

1. — Վաեմ. Տիգրան Խան Քէլէկեան, մեր Ընկերութեան Բարերար Անդամը, որուն 25.000 ֆրանքի վեհանձն նուիրատութիւնը հաղորդեցինք մեր վերջին Տեղեկագրին մէջ, իր եղբօր Գէորգ Քէլէկեանի յիշատակին Կիլիկիոյ մէջ որբանոցի մը շնութեան համար, բարեհաճեցաւ Միութեան տրամադրութեան տակ դնել երկրորդ գումար մը՝ 12.500 ֆրանքի, որպէս զի կարելի ըլլայ Զոք և Մարզուանի մէջ կառացանելի չէնքը գլուխ հանել: Առատաձեռն նուիրատուն ատով մեր երախտագիտութեան նոր իրաւունք մը ստացաւ:

2. — Մեր խորին չորրհակալութեանց հետ պիտի յիշատակինք զանազան նուիրատութիւնները զոր ըրաւ Տ. Սնդրակ Դաւիթեան, Միութեան էն հաւատալիք և անձնուէր անդամներէն մին:

Ահաւասիկ տառնց ցուցակը՝ օրուան գիներով հաշուուած.

16 բաժնեթուղթ «Սիւբբերի է Բաֆինըրի տ'էմիրթ»	Տ. Ո.	50,—
10 » «Պանք տ'Ապիսինի»	»	40,—
919 մեթր քառ. շէնքի հող՝ Մահմաշաի մէջ (Դաշիրէի մօտ)	»	135,—
1.500 » » » Տէմիրտաշի մէջ (Դաշիրէի մօտ)	»	225,—
71 ֆէտան 13 քր. 12 սէհմ. մշակելի հող՝ Նուպարիէի մէջ (Ստորին-Եգիպտոս)	»	352,50
Համագումար	Տ. Ո.	802,50

Նուիրատուն ցանկութեան համաձայն՝ Մահմաշայի հողին զուտ եկամուտը պիտի յատկացուի Խասքէօյի Գալֆաեան Որբանոցին, եւ այն պարագային որ այդ Հաստատութիւնը գոյութիւն ունենալէ դադրի՝ Եէտի-Գուլէի Ս. Փրկիչ Հիւանդանոցին: Տէմիրտաշի հողին զուտ եկամուտը պիտի գործածուի՝ իր ծննդավարը Ակնայ Ներսէսեան երկսեռ վարժարանին ի նպաստ: Գալով բաժնեթուղթներուն և Նուպարիէի հողին եկամուտին, որ Հիմնական Դրամագլուխի Հաշիւին անցուած է, պիտի գործածուի Միութեան նպատակին: Դիտելի է սակայն որ այս վերջին կալուածը այս պահու դատի տակ է Եգիպտ. Կառավարութեան հետ՝ Աղեքսանդ-

րիոյ Վերաքննիչ Խառն Ատեամնին առջեւ. որով Միութիւնը այն աւան միայն պիտի կրնայ օգտուիլ այս հողէն՝ երբ Ատեամնին վճիռը նպաստաւոր ըլլայ Տ. Ս. Դաւիթեանի:

Վերոյիշեալ հողերը տակաւին շահագործնելի չըլլալուն պատճառաւ, նուիրատուն այժմէն արտօնած է մեզ ի հարկին ծախելու և ատոնց տեղ գնելու արմէնթու զի՞ կամ հասութեամբ կալուած:

Այս թանկագին օմանդակութեամբ Տ. Ս. Դաւիթեան մեր Ընկերութեան Պատույ Անդամ կ'ըլլայ:

3. — Հաճոյքը ունինք նաև հաղորդելու ձեզի որ Մարքիզուհի Ռոպէրթօ Վէնթուրի ձէնօրի, հետեւելով իր մեծանուն հօր՝ Տիգրան Փաշա տ'Ապրօյի աւանդական վեհանձնութեան օրինակին, Պատույ Անդամի տիտղոսը ստացած է՝ Միութեան վճարելով 400 Անդղ. Ուկիի մուտքի տուրք մը և յանձնառու ըլլալով տարեկան 1200 ֆրանք անդամավճարի մը: Մեր ջերմագին չորրհակալիքը կը յայնենք բարեսիրա Մարքիզուհին:

4. — Բարիզի Հայկազնեան Ուսումնասիրաց Ընկերութիւնը ազնուարար մեզի յանձնեց իր գոյքը, որ կը բազկանար զանազան արժեթուղթներէ 14.866,50 ֆր. արժողութեամբ և 490 ֆր. գումարէ մը, համագումար 15.356,50 ֆր., պայմանաւ որ ատոնց տարեկան եկամուտով պահուի գիւղային վարժարան մը, զոր քիչ օրէն պիտի բանանք հայտնակ գիւղի մը մէջ՝ յանուն յիշեալ Ընկերութեան:

Զենք գիտեր ինչպէս չորրհակալ ըլլալ այս հաստատութեան Գործադիր Ժողովին՝ գէպի մեր ձեռնարկը ցոյց տուած վատահութեանը համար:

5. — Նմանապէս իր լուծման առթիւ՝ քաղաքս հաստատուած Զէյթունի Բարեսիրաց Ընկերութեանք իր տրամադրելի գոյքը, այսինքն 6 Եգիպտ. Գրէտի Ֆօնարէի պարտաթուղթ՝ որուն 4ը հին և 2ը նոր շրջարեռում, օրուան գինով Տ. Ո. 78,847, ինչպէս և 20 Եգիպտ. Ուկիի գումար մը, զոր յիշեալ Ընկերութեան Տնօրէն Ժողովին յայտնած փափաքին համաձայն՝ Զէյթունի կարօտութեանց յատկացուցինք վերջերս:

Մեր չորրհակալութիւնը կը յայտնենք յիշեալ Ժողովին՝ իր գործնական որոշումին համար, որ միենոյն ժամանակ Միութեան հանդէպ համակրական արտայայտութիւն մըն է:

6. — Զոք-Մարզուանի երեւելիներէն Տ. Պետրոս Բէլթէկեան, չի գոհամալով այն աջակցութենէն զոր նուիրած է մեր պատուիրակներուն՝ այդ քաղաքը գտնուած ատեննին, ինքնարերաբար Միութեան նուիրած է 20 տէնիւմ հող, որ առընթերակից է Քէլէկեան Որբանոցին համար գնուած հողերուն և որ կ'արժէ շուրջ Ե. Ռ. 80։ Մեր սրտագին շնորհակալիքը։

7. — Միութեան և տեղւոյս Միացեալ Որբախնամ Ընկերութեանց միջեւ գոյացած համաձայնութեան բերմունքով, ինչպէս անցեալ տարի, այս անգամ ևս պիտի գանձենք թատերական ներկայացման զուտ շահը։ Այս տարեկան հանդէսը տրուեցաւ Խախվական Օբերայի Թատրոնին մէջ՝ բարձր։ Խտիվին պատուակալ հովանաւորութեամբ՝ կարգադրի Մասնախումբի մը կողմէ, որուն անդամներն էին Տեարք Մ. Բիօ Պէյ, Մ. Մարկոսի Պէյ, Կ. Շէրիտճեան Պէյ, Արթին Պէյ Ստեփան և Մ. Անդրանիկեան, եւ Օժանդակ Մասնախումբի մը՝ որուն երիտասարդ անդամները եռանդի և անձնուերութեան տեսակէտէն իրարու հետ մրցեցան։

Անցեալ տարուան ներկայացման զուտ հասոյթէն, Ե. Ռ. 248,109, Հիմնական Դրամագլուխին յատուկ 1/6ը զեղչելէն վերջ, մաս մը վճարեցինք, Ե. Ռ. 87,305, Միացեալ Որբախնամ Ընկերութեանց պաշտպանութեան տակ գտնուող որբերուն ի նպաստ։

8. — Այս օրերս՝ Բրօվիտէնսի մէջ կազմուած Տուղասարի Ուսումնասիրաց Ընկերութիւնէն հաճոյքով ստացանք Ե. Ռ. 97,500ի նուիրատութիւն մը ևս, Արվազի Տուղասար գիւղին մէջ վարժարան մը կառուցանելու համար։ Այս Ընկերութիւնը ստանձնած է այս շինութեան բոլոր ծախսերը։ Արվազի Տեղական Մասնաժողովին յանձնած ենք այս աշխատութեանց գործադրութիւնը։

9. — Վերջապէս յիշենք ազնուօրէն եղած քանի մը նուիրատութիւններ՝ ի նպաստ կիլիկիոյ որբերուն, զոր յատկացուցինք Բէլէկեան Որբանոցին։

Ե. Ռ. 131,616 — Ճալայի Սուպարայիա քաղաքին մէջ հաստատուած խումբ մը ազգայիններու կողմէ։

» 73,125 — Լոնտօնակնակ մարդասէլներու կողմէ՝ ձեռամբ Բրօֆ. Կ. Թումայեանի (վերոյիշեալ Որբանոցին մէջ երկու որբի պատսպարութեան յատկացուած)։

Ե. Ռ. 27,982 — Մանչէսթրի Տեղական Մասնաժողովին միջոցաւ։
» 1,770 — Պոսթօնի «Ազգ» լրագրին կողմէ այս նպատակաւ բացուած հանգանակութեան մնացորդը։
» 3, — — Տ. Մկրտիչ Նաճարեանի կողմէ (Բրօվիտէնս)։
» 7,080 — Ֆրէզնոյի Տեղական Մասնաժողովին միջոցաւ։

Գ. — ԱՐԱՆՑ ԿԱՆԱՍՈՐՈՇ ՆՊԱՏԱԿԻ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ.

Ստացանք նաև, Երդ Շրջանի տեղողութեան միջոցին, յետագայ նուէրները, որ, նուիրատուներու կողմէ մամաւոր նպատակի մը յատկացուած չըլլալուն, ըստ Կանոնագրի՝ Հիմնական Դրամագլուխի Հաշիւին անցուած են։

1. — Ե. Ռ. 130,580ի գումար մը, զոր վճարեց Ռուսիոյ կոտորածին գոհերուն ի նպաստ տեղւոյս նպաստահաւաք Յանձնախումբը, և որ կը ներկայացնէ հանդանակութեան մնացորդին մէկ երրորդը։

2. — Ե. Ռ. 195ի նուիրատուութեան խոստում մը, տեղւոյս ազգայիններէն Տիկինի մը կողմէ, վէճի առարկայ ժառանգութեան մը առթիւ. յիշեալ գումարը վերջնականապէս Միութեան պիտի պատկանի՝ երբ նուիրատուխին միակ օրինաւոր ժառանգորդի հանգամանքը ճանչցուի. հետեւարար առայժմ մեր Հաշուեկշիուն մէջ ցոյց տրուած է իբր աւանդ։

3. — Ե. Ռ. 165,914,28, զանազան նուիրատուութիւններէ՝ որոնց ցուցակը կը ներկայացնենք։

Յ. — ՑՈՒՑԱՆ ԶԱՆԱԶԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԵՍՆՅ

	Ե. Դ.	Ե. Դ.
ԿԵԴՐ. ՎԱՐՉ. ԺՈՂՈՎ .—		
Տ. Կամարական Եղբարք (Զակազիկ)	157,—	
Տ. Պ. Ճապուրով (Պուբրէշ)	385,75	
Տ. Միհրան Սէք-Զէն (Շթութկարդ)	100,—	
Պեճիական Մասօն, Մեծ Օթեակ (Գահիրէ)	771,50	
Հանգանակութենէ մը (Ատիս-Ապապա)	108,30	
Տ. Ս. Դաւիթեան՝		
16 Արժեթուղթ Սիւրբքի և Բաֆֆիննրի տ'էժիրթ	5.000,—	
10 > Պանք օփ Ա-պիսինիա.	4.000,—	
Առուսիոյ Հրեայ աղէտեալներուն ի նպաստ հանգանակութեան յանձնախումբ (Գահիրէ)	13.058,—	
Զէյթունի Բարեսիրաց Բնկ. (Գահիրէ)	9.884,73	33.465,28
ԳԱՅԻՐԷԿԻ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ .—		
Տօքթ. Քէչէնեան, Ծննդեան այցի փոխարէն	20,—	
Գեր. Մ. Եպիսկ. Աղանունի, Միութեան Ընդհ. Ժողովին առթիւ	300,—	
Միութեան Մէլլալիի անդամները (Տ. Գ., Թաշճեանի միջոցաւ)	20,—	
Տ. Հ. Խնայէթեան, հանդէսի մը առթիւ	70,—	
Տ. Ս. Միտիւրեան	20,—	
Տ. Ի. Մէօթէմշեան, Բիւրիմեանի մահուան առթիւ	100,—	
Տ. Ա. Ժամկոչեան, Խնդրոյ մը կարգադրութեան առթիւ	195,—	
Տ. Մ. Անդրանիկեան, Մ. Սարգսեանի մահ. առթիւ	100,—	
Տ. Օ. Թոնքաւեան (Խպրահմիէ Շարգիէ), „ „ „	195,—	
Տ. Ճիյէրմեան Եղբարք (Զակազիկ) „ „ „	50,—	
Տ. Ա. Անտոնեան (Քաֆր-էլ-Շէյս) „ „ „	50,—	
Տ. Մէօթէմշեան (Զակազիկ) „ „ „	195,—	
Տ. Հ. Յովսէփեան (Ֆարու) „ „ „	100,—	
Տ. Կ. Թրեանց, Տիկին Բրուտեանի „ „ „	20,—	
Տ. Տէր-Մտեփանեան Եղբարք	50,—	
Տ. Մ. Անդրանիկեան, Մ. Զարուքմեանի մահ. առթիւ	200,—	
Տ. Հ. Աղասեան (Միթ-Համբ) „ „ „	200,—	
Տ. և Տիկ. Ա. Ամիրաեան, Տիկ. Իրիզճեանի „ „	97,50	
Տ. Յար. „ „ „ „	48,75	
	2.031,25	33.465,28
Փոխադրելի		

	Ե. Դ.	Ե. Դ.
Փոխադրեալ	2.031,25	33.465,28
Տ. Հ. Աղատեան, Տօքթ. էամէրեանի մահ. առթիւ	100,—	
Տ. Ն. Գայսերլեան, Տիկ. Միմնեանի „ „	20,—	
Տ. Գ. Ծիրանեան	100,—	
Միօթէմշեան Ժառանգորդներ, Մէօթէմշեան Կտակին բացման առթիւ.	2.925,—	5.176,25
ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ .—		
Վսեմ. Ա. Բարթող Բաշա, Տիկ. Զաքեանի մահ. առթիւ	195,50	
Տ. Յակոբ Պէյ Բարթող, „ „ „ „	97,—	
Վսեմ. Ա. Բարթող Փաշա, Մ. Սարգիսեանի „ „	100,—	
Տ. Ա. Ղազարեան „ „ „ „	50,—	
Տ. Գ. Զարուքմեան „ „ „ „	77,—	
Տ. Գ. Իրէքեան „ „ „ „	77,—	
Տ. Ս. Գայսերլեան „ „ „ „	97,50	
Մ. Ա. Միրէս, (Տ. Բ. Օհանեանի միջոցաւ)	390,—	
Վսեմ. Ա. Բարթող Բաշա, Մ. Զարուքմեանի մահ. առթիւ	200,—	
Տ. Մ. Թէկեան „ „ „ „	97,50	
Տ. Յ. և Տ. Զայլաքեան „ „ „ „	77,—	
Տ. Յ. Մութափեանց „ „ „ „	97,50	
Տ. Գ. Իրէքեան „ „ „ „	77,—	
Տօքթ. Մ. Ժամկոչեան „ „ „ „	97,50	
Տ. Լ. և Պ. Պէրպէրեան „ „ „ „	100,—	
Տ. Թ. և Գ. Թօրագետեան „ „ „ „	50,—	
Տ. և Տիկ. Պ. Օհանեան „ „ „ „	150,—	
Տ. Յակոբ Պէյ Բարթող „ „ „ „	97,50	
Տ. Կ. Մէլքոնեան „ „ „ „	97,50	
Տ. Մ. Շատափեանց, Մ. Սարգիսեանի „ „ „ „	40,—	
1909—1910 Տեղեկազրին առթիւ	15,—	2.280,50
Կ. ՊՈԼՍԻ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ .—		
Տ. Մերոբէ Հիւրմիւլ.	385,75	
Օր. Աննա Զամիչ.	39.000,—	
Տ. և Տիկ. Թարագետեան	465,25	
Տ. և Տիկ. Պատարաց	444,—	
Տ. Ն. Մրճիզեան.	88,60	
Տ. Ա. Պրուսակեան, իր կող յիշատակին	40.383,60	40.922,03
Փոխադրելի		

	Փոխադրեալ	Ե. Ղ.	Ե. Ղ.
S. Խաչիկօֆ Եղբարլք	40.383,60	40.922,03	
Գեր. Յ. Վարդ. Թումանեան	49,30		
Գ. Զ. (Տ. Յ. Ասիլեանի միջոցաւ)	16,50		
Տօրթ. Տաղաւարեան, Տ. Պօյանեանի ամուսն. առ.թիւ	88,31		
S. Ս. Ֆէնէրճեան	88,32	40.714,35	
	88,32		
ԻԶՄԻՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ. —			
S. Ս. Մօրուքեան	88,61		
S. Պ. Շիրինեան	44,40		
S. Ի. Լտիկմ.	13,30		
S. Յ. Տամամանեան	83,80	234,64	
ՄԵՐՍԻՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ. —			
S. Վալանթէն Էնքսէրճեան		82,50	
ՎԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ. —			
S. Ի. Գործումնան	32,60		
S. Մ. Տէր-Արբահամեան	24,50		
S. Ղ. Եազմալբեան	16,30		
S. Կ. Ապաղեան	16,30		
S. Գ. Փիլօյեան	16,30		
S. Գ. Պլնկէօյեան	16,30		
S. Շ. Ճէվնէրեան	8,10		
S. Տ. Զիթունի	16,30		
S. Ե. Փախչանեան	16,30		
S. Յ. Շահպաղեան	176,—		
S. Յ. Տէր-Ցակորեան	88,—	427,—	
ՍԸՎԱԶԻ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ. —			
S. Մ. Թաշճեան		175,50	
ԹՈՔԱՏԻ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ. —			
S. Լ. Գափաթեան		44,—	
Փոխադրելի		82.600,02	

	Փոխադրեալ	Ե. Ղ.	Ե. Ղ.
		82.600,02	
ՏԻՄՐՈՒՔԻՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ. —			
S. Թ. Ամիրանեան	19,20		
S. Յ. Ոսկերիչեան	4,10	23,30	
ԶԱՆԱՔ-ՔԱԼԵԻ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ. —			
S. Ս. Ղազարեան	16,23		
S. Օ. Բարազեան	16,22	32,45	
ԵՐՈՒՍԱԼԵՄԻ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ. —			
Գեր. Ա. Վարդ. Գասագեան		77,15	
ՀԱԼԵՊԻ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ. —			
S. Լեւոն Գարաճեան	263,—		
Դրամի տարբերութիւն	16, 25	279,25	
ՄԱՐՍԻԼԻԱՑԻ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ. —			
S. Մ. Զաքմաճեան		46,50	
ՎԻԷՆԱՅՑԻ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ. —			
S. Փափազեան և Աոլանեան, գործի մը առ.թիւ	226,20		
Ասպետ Ա. Վոն Բեթրովից	807,50		
Միկրարեանք Վեր. Հարք	323,—	1.356,70	
ՖԻԼԻՊԵԻ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ. —			
S. Յակոբ Պէնլեան	19,29		
S. Խաչիկ Լընասեան	7,71		
S. Պոլս ալ Քարլօ	2,—		
S. Մանուկ Գրիգորեան	2,—	31,—	
ՍՈՖԻԱՅՑԻ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ. —			
S. Արեկան Տեղեկագրին առ.թիւ		19,28	
Փոխադրելի		84.465,65	

Փոխադրեալ	Ե. Դ.	Ե. Դ.
ՖՐԵԶՆՈՒ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ. —		84.465,65
Տ. Հայրապետ Ստեփանեան		100, —
ԲՐՈՎԿԻՏԵԽՆՈՒ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ. —		
Տ. Պէտքը Սէֆէրեան, Ծնունդի տօնին առթիւ	100,—	
Տ. Մանուկ Ղազարեան	60,—	
Տ. Աւետիս Աճէմեան	20,—	
Տ. Սահակ Եսդժեան	20,—	
Տ. Մ. Թովակիմեան	20,—	
Դաշտային հանդէսի մը հասոյթը	360,—	
Դատի մը առթիւ	199,60	
Զանազան փոքր նուիրատութիւններ	140,—	
ՐԻԶՄԵՆՏԻ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ. —		920,—
Տ. Նշան Տարիսանեան	40,60	
Տ. Մինաս "	40,60	81,20
ԲՈԹԱՔԵ-ՍԵՆԹՐՈ ՖՈԼՍԻ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՍՆ. —		
Տ. Ցակոր Թամամեան	5,—	
Տ. Գէորգ Խաչինեան	10,—	
Դաշտային Հանդէսի մէջ հոնցանակութիւն	157,80	
Տիկնանց Օժանդակ Մասնաժողովի մուտքի տուքերը	159,70	
" " " " անդամակիցաններէ	219,50	
ՆԻՒ-ՊՐԻՅԹԷՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ. —		552,—
Լուսանկարի վաճառումէ հասոյթ		58,65
ՊՐԱՔԹԸՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ. —		
Զանազան փոքր նուիրատութիւններ	41,10	
Վիճականութեան մը հասոյթը	214,35	
Դաշտային հանդէսի մը "	356,33	
Համագումար դրամական նուիրատութեանց Ե.Դ.		611,78
ԿԱԼՈՒՄԱԿԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒԹԻՒՆՆԵՐ. —		86.789,28
Կ. Պոլիս. Տ. Ս. Դաւիթեանի կողմէ նուպարիէի հողը	35.058,—	
70 Ֆէտ. 12 բիր. 13 ս.	43.875,—	79.125,—
Ի՞սկի՞ Տ. Մ. Մուպարիանի կողմէ Առ-Պէտէսմէնի բանալութը		165.914,28
Համագ. ընդի. նուիրատութեանց . Ե. Դ.		

Դ. — ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾ

Ինչպէս որ յայտ կուգայ վերեւ արտարերուած նպաստացուցակէն, վերջին ութը ամսուան միջոցին՝ գաւառային երսունի չափ գպրոցներու օժանդակած ենք: Մեր զրկած նպաստներուն շնորհիւ քանի մը նախակրթարաններ հիմնուած են, ուրիշներ՝ որ առիջգոյէ եկամուտի առժամապէս փակուած էին վերաբացուած են, և վերջապէս խել մը վարժարաններ՝ որ պարտքերով ծանրաբեռնուած էին՝ նիւթապէս ամոքուած են:

Մեր նպաստները ծառայեցին նաև աւարտելու շինութիւնը հետեւեալ հաստատութեանց — Զէյթունի կեդր. Վարժարանը, Հաճընի Ազգ. Որբանոցը, Խօրասանի և Տէրէնտէյի (Սըվազ) դըպրոցները:

Բրօվիտէնսի մէջ հաստատուած Տուղասարի Ուսումնասիրաց Ընկերութեան նուիրատութիւնը յատկացուցինք Տուղասարի մէջ վարժարանի մը կառուցման:

Վերջապէս, կարեւոր գումարներ զրկեցինք յետագայ կրթական ձեռնարկութեանց — Հայոց Միացեալ Ընկ., Ազգանուէր Հայունեաց Ընկ., և Դպրոցասէր Տիկնանց Ընկ.:

Այս գպրոցներուն նպաստներէն զատ, պիտի ներկայացնենք ձեզի ընդհանուր տեսութիւն մը մեր խել սեփական կրթական գործին վրայ:

I. — ՔԷԼԷԿԵԱՆ ՈՐԲԱՆՈՑ—ՎԱՐԺԱՐԱՆ.

Մեր վերջին Տեղեկագրին մէջ բացարեցինք թէ ի՞նչ պայմաններու մէջ վսիմ. Տիգրան Խան Քէլէկեան Միութեան նուիրած էր 25.000 ֆր. ի գումար մը՝ կիմկիոյ մէջ Որբանոց մը հիմնելու համար: Ըստ այսմ՝ Որբանոց — Վարժարանի մը հիմնարկութեան

ծրագիրը պատրաստեցինք, և բարեւէր նույնառութիւն փափաքին լաւագոյն կերպով՝ գոհացում տալու նպաստակով՝ տեղույթն վրայ զրկեցինք պատուիրակութիւն մը, պաշտօն տալով՝ ընտրել յարմարագոյն վայրը և ի հարկին հող մը գնել ու վարժարանին շնութեան մտախն պէտք եղած միջոցները ձեռք առնել : Տեսարք կ. Շէրիֆածեան Պէտք և Յ. Օհաննեան անձնուիրաբար ստանձնեցին այս յոդ-նեցուցիչ պաշտօնը, և պէտք է խոստովանինք որ խիստ գոհացուցիչ կերպով կատարեցին, ներկայացնելով մեզի շահեկան տեղեկագիր մը որուն համար անկեղծօրէն չնորհակալ հնք իրենց :

Տեղւոյն վրայ քննութեան ձեռնարկելէ և խնդիրը իր զանազան կողմերուն մէջ խորագննին ուսումնասիրելէ վերջ, թէ՛ անտեսական և թէ՛ առողջապահութան ու այլ անսակէաներով, մեր պատուիրակները իրենց ընարոտ թիւնը կայացուցին Զոք-Մարզուանի վրայ (Տէօրթ-Եօլ կամ Էօմբանիէ), և հոն բախտաւորութիւնը ուսնեցան նպաստաւոր պայմաններով ձեռք անցընելու յարմար դիրքով երեք կատր հող, ընդամէնը 33 տէօնիւմ։ Տեղւոյն բարեսէր ազգայիններէն Տ. Պետրոս Բելթեքնան ևս այդ առթիւ 20 տէօնիւմ հող ազնուարար նուիրեց Միութեան, այնպէս որ ապագայ վարժարանը պիտի ունենայ 53 տէօնիւմ տարածութեամբ մշակուի հող մը ևս։

Այսուհանդերձ Շէրլիտմեան Պէյի և Տ. Օհանեանի տեղեկագրին, ինչպէս և ճարտարապետ Մ. Մարկոսօֆ Պէյի և Տ. Կարծ Պալեանի կողմէ ազնուաբար պատրաստուած յատակագիծին նայելով, ծրագըրուած Որբանոցին շինութեան ծախքերը զգալապէս կը գէին մեր նախատեսութիւնները, որով և Միութեան այս նպատակաւ տրամադրած գումարները անբաւական պիտի ըլլալին։ Բայց ուրախ ենք հաղորդելու ձեզի որ Քէլէկեան Խան այս իրողութիւնը իմանալուն պէս, առանց նոր խնդրանքէ մը ազդուելու, ինքնայօժար բարութեամբ փութաց մեր տրամադրութեան ներքեւ գնել 12.500 ֆր.ի յաւելուածական գումար մը, որով իր նորիրատութեանը կը հասնի 37.500 ֆր.ի։ Այս գումարը, որուն վրայ պէտք է բարդել Ե. Ա. 481,730, որ 1909 ին վերջերը կագմակերպուած վիճակահանութեան մնացորդն է, ձեռնառու պիտի ըլլայ Որբանոցին շինութիւնը զլուխ հանելու։ Այդ հաստատութեան մէջ պատսպարուելիք որբերուն անունով մեր խորին երախտագիտութիւնը կը յայտնենք անդամ մը ևս Քէլէկեան Խանի։

Արդէն շինուածանիւթներու գնուամին ձեռնարկած ենք, եւ շէնքին աշխատութեանց մղում տալով՝ կը յուսանք որ Որբանոցին բացումը պիտի կրնայ տեղի ունենալ յառաջիկայ աշնան (*):

Ապագայ Որբանոցին վարչութեան խնդիրը մեզ լրջօրէն մտահոգած էր, բայց համայքը ունինք ծանուցանելու որ Միացեալը, որ ձեռնհասօրէն կաղմակերպուած է այս մասին, յանձն առաւ այդ հոգը:

Աւելցնենք նաև որ մնը վերջին Տեղեկադրէն վերջ հետեւալ նոր յանձնառութիւնները ընդունեցանք այս Որբանոցին մէջ պատըս-պարուելիք որբերու ի նպաստ։ Խնչպէս յայսնի է՝ որը գլուխ տարեկան 7 Անգլ. Ոսկիի հաշւով, 5 տարուան համար կ'ընդունուին որբերու պաշտպանութեան յանձնառութիւնները։
Պրաքթընի և շրջակաքի Տիկնանց Որբախնամ Ընկերութիւն որբ 1 Խումբ մր Լուսածնաբնակ մարդասէրներ (Ճեռամբ Բրօֆ։

կ. Թումայեանի) » 2
որով պաշտպանուած որբերու թիւը, որ անցեալ տարի 56 էր, կը
հասնի 59 իւ:

Այս բաժանուրդագրութիւնը տակաւին բաց կը մնայ

Ստացանք նաև հետեւեալ նուիրաառութիւնները լնդհանուր որբերու պայտապանութեան համար՝

Հէնրիկ. Պլէքուէլ Ֆլընտ (Պոսթօնի մեր Ամսնա-

գովինմիջոցաւ) b. n. 20,587

Գանագան նուիիատուութիւններ (Մանչէսթրի մեր

Մասնաժողովին միջոցաւ) որուն 10 Անգլ.

Պակին Տ. Պ. Թօփալեանի կողմէ՝ օ տար.

ուշան լանձնառութեամբ

Կիսառասի Ուսանողի Խնամակալութիւնը՝ որուն անդամները Ման-

Հետո կը պահպանին՝ վճարեց մեզի խոստագուած երկրորդ տարե-

վճառութեան վայր առաջ առ լայնացած գույք է կազմութիւնը . կազմութիւնը կազմութիւնը . կազմութիւնը . կազմութիւնը .

պատելով իր ջանքերը լաֆողեցաւ աւարիկան անդամավճարները

բարձրացնելու Ե. Ո. 274, 462ի որ, Հիմնական Դրամագլուխի Հայիւխն յատուկ 1/6թ զեղջուելէ վերջ, Քէլէկեան Որբանոցի մասակարարութեան ծախքերուն պիտի գործածուի՝ ըստ համաձայնութեան :

(*) Տ. Լեռն Պէտպէրեսն՝ իբրեւ պատուիրակ, և Տ. Ալշամ Թիւրապեան (Երկրաչափ) իբրեւ աշխատութեանց հոկիչ, այսօր իսկ Զոք-Մարզուան մեկնեցան. Վերջինը տեղոյն վրայ պիտի մայ մինչև շէնքին աւարտիլը.

Այս թուանշաններուն վրայ հարկ է նաև աւելցնել Ե. Ո. 131,616ի գումար մը, արդիւնք Սուրապայիայի (Ճավա) հայ գաղութին հանգանակութեան՝ ինչպէս յիշատակեցինք «Նուիրատուութիւն» գլուխին մէջ. — Ե. Ո. 1,77, Պոսթօնի «Ազգ» լրագրին կողմէ բացուած հանգանակութեան մնացորդը. — և Ե. Ո. 3, նուիրուած Տ. Մ. Մաճարեանի կողմէ (Բոօվիսէնս):

Քէլէկեան Որբանոցին շինութիւնը ժամանակի կարօտ խնդիր մը ըլլալուն, մեր պատուիրակները առաջարկած էին որ վաթունի չափ որբեր պահենք Կիլիկիոյ Ազգ . Որբանոցներուն մէջ, որ կը կառավարուին Կիլիկիոյ Կեղր . Որբախնամ Յանձնաժողովի կողմէ (Կ. Պօլիս) : Այս անբախտ տղաքը անմիջական օգնութենէ մը չի զրկելու համար, այնքան աւելի երախտադիտութեամբ ընդունեցինք այս մասին Կեղր . Յանձնաժողովին կողմէ ևս ցոյց տրուած պատրաստակամութիւնը, որքան մանաւանդ համոզուած էինք թէ Որբանոցի առժամեայ կարգադրութիւն մը՝ սպասելով որ ծրագրուած Որբանոցը կառուցուի՝ բազմապիսի դժուարութիւններ ունի : Այսպէս ուրեմն՝ 1 Օգոստոս 1910 էն սկսեալ 60 որբեր մեր հաշւոյն կը պատսպարուին Զոք-Մարզուանի և Հասան Պէյլի Ազգ . Որբանոցներուն մէջ : Մինչեւ այսօր անոնց պատսպարման ծախքերուն համար Կեղր . Յանձնաժողովին վճարած ենք Ե. Ռ. 94,700, որը գլուխ օրական 60 փարայի հիման վրայ : Անմիջապէս որ Քէլէկեան գլուխ օրական 60 փարայի հիմնուի, պիտի դադրեցնենք այլ նը-Որբանոցը վերջնականապէս հիմնուի, պիտի դադրեցնենք այլ նը-պատը . բայց, ատոր փոխարէն, մեր Որբանոցին մէջ պիտի ընդունինք այդքան թիւով որբեր, զոր պիտի ընտրենք Կիլիկիոյ Ազգ . Որբանոցներուն մէջէն :

Ահաւասիկ Զոք-Մարզուանի Քէլէկւան Որբանոց - Վարժարապետներ ելմտական կացութիւնը :

**ԶՈՐ - ՄԱՐԶՈՒԹՅՈՒՆԻ ԳԵԼԵԿՆԱՆ ՈՐԾՄՆՈՑ - ՎԱՐԺԱՐԱԲՆԻՆ
ԵԼՇԽՄՏԱԿԱՆ ԿՕՑՈՒԹԻՒՆԸ**

	Ե. Դ.	Ե. Դ.
Մաճչկարքի Տեղական Մասնաժողովին. Անդամակնարներուն 5/թը		24.053,85
Արդեգիր պատշաճաներու տարեկան նը- պատմին հաւելյան զանձուած. —		
Տ. Յ. Հինոյէքեան, առաջին տարեվճար	682,50	
Տ. Յ. Պաթմանեան, ա. և բ. >	1.365,—	
Պրաբթընի Տիկնանց Որրախնամ Ընկ.	682,50	
Լուսոնարնակ խումբ մը մարդասէրներ (Բրոֆ. կ. Թումանանի միջոցաւ)	7.312,50	
Կիպրոսի Որբ. Ընկ. (Մանչէսթըր) բ. տարեվճար. .	24.375,—	
Հէնրի Պէքուէլ Ֆընտ (Պոսթօն)	2.058,70	36.476,20
Մաճչկարքի Տեղական Մասնաժողովին միջոցաւ նույրատուուրիներ. —		
Տ. Կ. և Ս. Եղիազարեան	487,50	
Տ. Մ. Ստանագոլլըեան	487,50	
Տ. Գ. Յակոբեան.	292,50	
Տ. Գ. Սեպսւհեան	195,—	
Տ. Ս. Սեպուհեան	97,50	
Տ. Ս. Փաւլաքնեան	97,50	
Տ. Մ. Փափազեան	48,75	
Տ. Գ. Ք. Թօփալեան.	975,—	
Տ. Յ. Էլիկիւզէլ	58,50	
Տ. Արամ Մուրատեան	58,50	
Զանազան. —		
Սուրապայայի (Ճապա) հայ գոտութին հանգանակու- թեան արդիւնքը	13.161,67	
Տ. Մ. Մամարեան (Բրովիտէնա)	300,—	
«Ազգ» Թերթի հանգանակութեան մնացորդը (Պոսթօն)	177,—	
Հանգանակութիւն մը (Ֆրէկնօ)	708,—	17.144,92
ՀԱՄԱԳՈՒԽՄԱՐ.	77.674,97	

2.—ՄԷԹԵՄԷՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ.

Մեր վերջին Տեղեկադրին մէջ հաւզորդած էինք թէ ողբացեալ Գրիգոր Մէօթէմէտեան Միութեան կտակած է երեք կտոր մշակելի հող, Զակագլիկի մօտ, 3.000 ե. Ո. արժողութեամբ:

Հաճոյքը ունինք իմացնելու ձեզի թէ իր ժառանգորդները ազնուաբար նուիրագործեցին յիշեալ կտակը՝ իրենց միաձայն հաւանութեամբը, և թէ՝ տեղւոյս Ազգ. Առաջնորդարանին մէջ կտակագրին բացման առթիւ՝ իրենց մարդասիրական զգացումներուն մէկ նոր ապացոյցը տուին Միութեան նուիրելով Յ0 Անգլ. Ուկի գումար մը:

Սոյն կալուածին փոխանցումը վերջնականապէս կատարուած է ժողովիս Ատենապետին անուանը, և անոր վարձակալութիւնը եւս՝ հրապարակային աճուրդի հետեւանքով՝ տրուեցաւ Մէօթէմէտեան ժառանգորդներուն, մէկ տարուան համար, եւ իւրաքանչիւր ֆէտտանը տարեկան 9 ե. Ո. վարձքի փոխարէն:

Եկամուտները պիտի դիզուին մինչեւ որ բաւական ըլլան թոքատի մէջ հող մը գնելու և հոն վարժարան մը կանգնելու, կտակատարին բացորոշ կամքին համաձայն:

3.—ԳԻՒՂԱՅԻՆ ՆԱԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ.

5 թ. Շրջանին վերջերը, Միութիւնը քսան փոքրիկ նախակրթարաններ հիմնեց այնպիսի հեռաւոր գիւղերու մէջ, ուր մեր հայրենակիցները կ'ապրին բացարձակ տպիտութեան մէջ: Այդ վարժարաններուն գործունէութիւնը կրցանք ապահովել՝ չնորհիւ Միացեալ Ընկերութեանց, որ այս առթիւ ևս համեցան իրենց աջակցութիւնը նուիրել մեզի: Յիշեալ Ընկերութեան Տնօրէն Խորհուրդը հաճոյակատարութիւնը ունեցաւ արդարեւ ստանձնելու տեսչութիւնը սոյն գիւղային դպրոցներուն, ուր նախնական կրթութիւն մը պիտի տրուի այդ Ընկերութեան վարժարաններուն յատուկ ուսումնական ծրագրին վրայ, ծրագիր՝ որ մանկավարժական նոր դրու-

թեան և երկրին գործնական պէտքերուն համապատասխանուած է: Համաձայնութիւն գոյացաւ երկու հաստատութեանց մէջ որ Միութիւնը Միացեալին պիտի վճարէ տարեկան 300 Օսմ. Ուկի գումար մը, Միութեան անունով և հաշւոյն բացուած յիշեալ քսան գպրոցներուն մատակարարութեանը համար, իսկ տարեկան ծախութերու մնացորդը պիտի գոյուի իւրաքանչիւր գիւղի բնակիչներուն հաւաքական օգնութիւններովը:

Այս գրութիւնը որ Ալիանս իզրայէլիդի կողմէ վաղուց գործ գրուած է, ինչպէս և վերջերս Միացեալին կողմէ, լաւագոյն արդիւնքները տուած է. ատոր առաւելութիւնը կոկին է, նախ որ այս կերպով դպրոցներուն պիտութէն կը թեթեւնայ, յետոյ գիւղացիներուն սէրն ու անձնուիրութիւնը կ'ապահովուին իրենց վարժարաններուն համար:

Ստորեւ կը նշանակենք Միութեան հաշւոյն Միացեալ Ընկերութեանց կողմէ բացուած յիշեալ նախակրթարաններուն ցուցակը:

Սղերդ (Ծաղկոց), Տէհ, Հաղոր, Ղարզանի մէջ՝ Ոնտուան, Զոգ, Գուպին, Տուսատաք, Մալաքան, Սասունի մէջ՝ Հաղզո, Տղերիկի մէջ՝ Կրասէրա, Քէրիք և Կունտէճանո, Խսարունար, Սլիվանի մէջ՝ Հաշթէր, Հէլին և Պաշնիք, Կիլիկիոյ մէջ՝ Ալպիսթան, Կապան, Վահկայ, և Սուէտիոյ գիւղերէն՝ Հաճի-Հապիկուլի կամ Քէպուսիէ:

Սղերդի, Տեհի, Հաղորի, Ալպիսթանի, Կապանի եւ Հաճի-Հապիկուլի գպրոցները վերջերս Միացեալին կողմէ իր հաշւոյն արդիւնական գործունէութիւնը նույնականացնելու մը բացուած ըլլալով, գոյացած համաձայնութեան վրայ Միութեան փոխանցուած են և այս վերջինին հաշւոյն կը կառավարուին այլեւս:

Մօսերս ուրիշ գիւղային դպրոցի մը բացումին ևս պիտի ձեռնարկենք՝ Բարիզի Ուսումնասիրաց Ընկերութեան հաշւոյն, ինչպէս վերը ըսուեցաւ, յիշեալ Ընկերութեան կողմէ Միութեան յանձնուած 15.356,50 ֆր. ի նուիրատուութեան չնորհիւ:

4. — ՎԱՐԺԱՊԵՏԱՆՈՅ.

Միացեալ Ընկերութեանց պատուիրակ Բրօֆ. Յովհաննէս Յառիքան վերջերս մասնաւոր պաշտօնով Եգիպտոս եկած ըլլալով, ժողովիս տուած մէկ այցելութեանը առթիւ՝ քննեցինք Վանի մէջ Վարժապետանոցի մը ծրագիրը, որուն պէտքը օր օրի աւելի չեշտուած է: Զեռնհաս ուսուցիչները հազուագիւտ են և ազգովին խել մը դժուարութեանց կը հանդիպինք գտնելու համար կարող դաստիարակներ, երբ միւս կողմէն հետամուտ կ'ըլլանք վարժարաններ բանալու: Այս պարագան մեզ համոզեց Վանի մէջ Վարժապետանոց մը հիմնելու, բարեհաճ օժանդակութեամբ Միացեալի՝ որ արդէն իսկ յանձն առաւ այդ հաստատութեան վարչութիւնը:

Հաւանական է որ Վանի Հայկազեան կեղը. Վարժարանը վերածուի Վարժապետանոցի, եթէ այս մասին սոյն կրթարանին հիմնամակալութեան հետ սկսուած բանակցութիւնները նպաստաւոր ելքի մը յանդին:

Ծրագրուած Վարժապետանոցին պիտաժէն պիտի ըլլայ 600 Օսմ. Ոսկի, որուն 150ը արդէն ապահովուած է զանազան աղբիւրներով. ուրինմն Միութիւնը տարեկան 450 Օսմ. Ոսկի միայն ծախսելու հարկին մէջ պիտի գտնուի:

Բաց աստի, Միացեալը ստանձնած է յիշեալ Վարժապետանոցին նախնական աեղաւորումի հոգը, որուն համար Միութիւնը յատկացուցած է 200 Անգլ. Ոսկիի միանուագ գումար մը:

Վարժապետանոցի մը հիմնարկութեան լուրը հասարակութեան կողմէ անխոտիր խանդավառութեամբ ողջունուեցաւ, և այս պատճառաւ բազմաթիւ գնահատագիրներ ստացանք՝ որ ցոյց կուտան թէ ո՛րքան մեր որոշումը կը պատասխանէր անհրաժեշտ պէտքի մը:

Այս գլուխը փակելէ առաջ, շահեկան կը համարինք վեր հանել Ալիսնս իզրայէլիդի կրթական գործին յառաջառութիւնը իր հիմնարկութեան առաջին տարիներուն մէջ: 1866ին, այսինքն առաւ-

ջին դպրոցին բայցումէն հինգ տարի վերջ, Ալիամուր Յ վարժարան ունէր. 1868ին 7, 1872ին 17, և 1877ին, այսինքն 15 տարի վերջ, իր վարժարաններուն թիւը կը համնէր 30ի:

Ինչպէս կը տեսնէք, մեր յառաջդիմութիւնը աւելի որպագ է, ինչ որ կը քաջալերէ մեզ վստահութեամբ նկատելու Միութեան ապագան:

ՏԵՂԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎՆԵՐ

Յ Յ Ա պ ի լ 1909ին, Միութիւնը երեք Մասնաճիւղ միայն ունէր Աղեքսանդրիա, Մանչէսթր և Պութօն: Այդ թիւը բարձրացաւ 31ի՝ Յ Յ Ա պ ի լ 1910ին, հետեւեալ Մասնաճիւղներուն կազմութեամբ:

Գահիրէ, Կ. Պոլիս, Խղմիր, Մերախն, Սըլաղ, Հալէպ, Պրուսա, Էնկիւրիւ, Տիարալէքիր, Խարբերդ, Էրզրում, Երզնկա, Զանաք-Քալէ, Սօֆիա, Ֆլիփակէ, Ռուսանուգ, Նիւ-Եօրք, Ֆլւատէլֆիա. Բրօվիտէնս, Ռուսար, Նիւ-Պրիթէն, Պրաքթէն, Լորէնս, Ռիչմենտ, Բօթաքթ-Աէնթրլ Ֆոլս, Խսթ-Քէմպրին, Պրիմուօթր և Ֆրէզնո:

Ասկէ զատ, երեք Օժանդակ-Մասնաժողովներ կազմուած էին՝ Մանիսայի, Աֆիօն-Գարա-Հիսարի և Նիւ-Եօրքի մէջ:

Վերջին Շրջանին մէջ, մեր Տեղական Մասնաճիւղներուն թիւը գրեթէ կրկնապատկուեցաւ 28 նոր Մասնաժողովներու կազմութեամբ, որոնց մեծագոյն մասը կը պարտինք Փողովիս Փոխ-Ատենապետ Ե. Աղաթօն Պէլի և Կ. Պոլիս Մասնաժողովին Ատենապակիր Տօքթ. Ն. Տաղաւարեանի նախաձեռնութեանը: Ահաւասիկ անոնց ցուցակը. — Վան, Պանտրմա, Պէլիրութ, Զոք-Մարզուան, Երուսաղէմ, Թոքաստ, Խսքէնտերուն, Տրապիզոն, Սամսոն, Սելանիկ, Էտիրնէ, Սիս, Ատանա, Գայսերի, Վիէննա, Մարսիլիա, Անվէրս, Ժընէլ, Լէմբնաթր, Բաթէլան և Միուլազօրօ:

Դեռ վերջերս Մասնաժողովներ կազմուեցան նաև՝ Խարթումի, Այնթապի, Լոնաօնի, Պրիւքէլի, Ուէսթ-Հոպոքլնի, Թրօյի եւ Հարթֆրբտի մէջ:

Մանիսայի և Աղօն-Գարա-Հլատի Օժանդակ Մասնաժողովները, որ իզմիրի Մասնաժիւղին ենթակայ էին, անկախ Մասնաժողովի վերածուեցան, որպէս կեղը. Ժողովին հետ ուղղակի կը յարաբերին:

Այսպէս ուրեմն՝ Միութեան Տեղական Մասնաժողովներու թիւը բարձրացած է այսօր 61ի, որուն վրայ պիտի աւելնան մօտերս քանի մը Մասնաժողովներ են՝ որոնց հաւանական կազմութիւնը հաղորդած են մեզի, Ամափայի, Պալըքէսէրի, Ռոտոսթօյի, Եօղդափայի և ուրիշ կեդրոններու մէջ:

Միեւնոյն համեմատութեամբ Միութեան գործօն անդամներուն թիւը ևս հասած է 3947ի, մինչեւ այսօր կեդրոն հասած անդամացուցակներուն նայելով :

Կրնանք ըսել որ Տեղական Մասնաժողովները, հազուադէպ բացառութեամբ, գործունէութեան և արդիւնաբերութեան մասին իրարու հետ մըցեցան. անսնցմէ ոմանք հանդէմներ և հրապարակային ժողովներ սարքեցին, ուր ականաւոր բեմբասացներ խօսեցան, մեր Ընկերութեան տարածումին հետամեելով: Այս հաւաքոյթները լաւագոյն արդիւնքները տուին, մասնաւորապէս Ամերիկայի մէջ, ուր Գեր. Մուշեղ Եպիսկ. Սերովեան, մեր ձեռնարկին եռանդու առաքեալը, Ամերիկահայ գաղութին կողմէ ջերմապէս ծափահարուած հրապարակախօսութիւններու մէջ, պիրճարանորէն պարզած և ուսումնասիրած է Միութեան հետապնդած մարդասիրական բարձր նպատակը: Իր ինքնաբեր և բարեհաճ նախաձեռնութեան շնորհիւ է որ այդ կողմերը կազմուեցան կամ վերակադմուեցան մէկէ աւելի Մասնաժողովներ:

կաղմունացան սեզ, և այս թերթի վեհական գործութեան
Նիւ-Եօրքի և Պոսթօնի Մասնաժողովներուն թելադրութեան
վրայ, Ամերիկայի Տեղական Մասնաժողովներու մօտ Էնդհանուր
Քարտուղար անուանեցինք Տ. Վ. Քիւրքճեան, որուն դէպի Միու-
թիւնը ցոյց տուած հոգածութեանը մասին արդէն խօսած ենք:

Մեր Ընկերութեան՝ այդ կարեւոր կեղքոնին մէջ հետզհետէ գտած ծաւալումը անհրաժեշտ դարձուցած էր այսպիսի անօրէնութիւն մը, սպասելով որ աւելի իրական և աւելի ազդեցիկ կերպով թիւն մը, սպասելով Սիութեան բրօքականութեան այդ երկրին մէջ, ուր կազմակերպուի Միութեան բրօքականութեան ամառական կոչուած է անիկա կարեւոր դեր մը խաղալու, դատելով համակը արտայայտութիւններէն դոր ամէն առթիւ ցոյց կուտան նոր կըրանքի արտայայտութիւններէն դոր ամէն առթիւ ցոյց կուտան

աշխարհի մեր ազնիւ հայրենիակիցները, որոնց փութեառութիւնը եւ գուրդուրանքը դէպի ազգօգուտ ձեռնարկները արդարեւ օրինակելի են :

Անհնար է մեզի յիշատակել հոս այն բոլոր Տեղական Մասնաժողովները և առելի յայտորշապէս Մասնաժողովներու վարիչ անդամները, որ շատ մնձ անձնութիրութեամբ աշխատեցան Միութեան յաջողութեանը և զանազան առիթներու մէջ չի զլացան իրենց թանկագին օժանդակութիւնը։ Բաւ կը սեպենք ըսել միայն որ Միութիւնը իր բարդաւաճումը կը պարտի իր բոլոր Տեղական Մասնաժողովներուն հաւաքական գործակցութեանը, և թէ՛ նոյն իսկ անարդար պիտի ըլլար ստորագծել ումանց մատուցած ծառայութիւնները առանց մատնանշելու ուրիշներու անձնուէր ջանքերը։ Եթէ անոնցմէ մէկ քանին, տեղական համագամանքներու և այլազան գժուարութիւններու բերմանքով, չի կրցան փափաքուածին չափ բարգաւաճիլ, ամէն պատճառ ունինք յուսագրուելու որ յաջողութիւնը պիտի չուչանայ պսակելու իրենց ջանքերը։

Ամէն կողմէ մեղի կը շեշտեն զանազան լիզուներով Միութեան կանոնագիրը ժողովուրդին մէջ ցրուելու պէտքը : Անորդերմաններէն թարգմանութիւնը ունեցանք արդէն ; չնորհիւ Միութեան վիէննայի Մամնաժողովին Ստենապետ Գերյ . Հայր Մէնէվէշեանի : Ու վերջին պահուն կ'իմանանք նաև որ Կ . Պօլսի Տեղական ժողովը ևս մեր կանոնագիրը օսմաններէնի թարգմանած է , թէ հայտառ և թէ թրքատառ՝ զատ զատ տպագրութեամբ :

Զենք կարող վերջացնել ներկայ Տեղեկագիրը, առանց ստուրագծելու այն ծառայութիւնները զոր Միոթեան մատուցին մասնաւորապէս մեր անմտնջ աշխատակիցը Տօքթ. Ն. Տաղաւարեան և Իզմիրի Մասնաժողովին մեծանձն Աւենապետը Տօքթ. Պ. Կոստանդեան, որոնց երկուքն ալ անպայման չնորհեցին մեզի իրենց օժանդակութիւնը, չի ինսայելով իրենց ժամանակը և ոչ ալ իրենց ջանքերը, այնպիսի եռանդով և անձնուիրութեամբ որ Ժողովս որոշեց իր երախտագիտութիւնը յայտնել անոնց, մեր Կանոնագրին հրդ Յօդուածին տրամադրութեանը համաձայն «Պատոյ Անդամի» ախտղոսը տալով :

Մեր Տեղական Մասնաժողովներէն ումանք, և մահաւանդ Ամերիկան Մասնաժողովները, քանիցս մեր ուշադրութիւնը հրա-

ւիրած ըլլալով Տեղական Մասնաժողովներուն վերամորագումը «Երեք տարին անդամ մը կիսովին» ընելուն անպատճենութեանց վրայ, կ'առաջարկենք ձեզի որ Կանոնագրին 15 րդ Յօդուածին դ. հատուածին 2րդ տունը հետեւեալ կերպով բարեկոխելու մասին խորհրդակցութիւն կատարէք.

«Վերանորոգումը պիտի կատարուի ներկայ Յօդուածիս ք. հատուածին տրամադրութեան համաձայն, տարին անդամ մը կիսովին: Եթէ անդամներու ամբողջական թիւը անզոյդ է՝ առաջին վերանորոգումը կեսեն մեկ պակաս անդամներու համար պիտի ըլլայ: Վիճակաւ դադրած անդամները վերբնութիւնի են»:

Վերջապէս, մեկնելէ առաջ, պիտի հաճիք նաև անուանել Հաշուեքնիչ մը՝ ընթացիկ Տարեցրջանին (1911) հաշիւները քըն-նելու պաշտօնով:

Տեղեկագրին ընթերցումէն վերջ, Ամենադպիրը կը կարդայ Հաշուեքնիչ Տ. Էտկաս Փափաղեանի Տեղեկագրիր՝ 1 Մայիս—31 Դեկտեմբեր 1910 Շրջանի հաշիւներուն մասին:

ՀԱՇՈՒԵՔՆԻՑԻ ՋԵՂԵԿԱԳՐԻ

Համաձայն պաշտօնին զոր Միութեան Ընդհ. Ժողովը համեցաւ ինձի վստահիլ, քննեցի ներկայ Շրջանի հաշիւները՝ 1 Մայիս—31 Դեկտեմբեր 1910, և կը փութամ յայտարարել թէ ձեզի ներկայացուած Հաշուեկուրը, ինչպէս և անոր յարակից մանրամասնութիւնները, Միութեան տումարներուն հետ կատարելապէս համաձայն են:

Միութեան Եկամուտները, որ յատկացուած են նպաստներու և դպրոցներու մատակարարութեան, կը ներկայացնեն՝ Ե. Ա. 2.266,614
1.— Հիմնական Եկամուտ.	» 124,108
2.— Մասնաւոր	» <u>2.390,722</u>

Նախորդ Շրջանին տրամադրելի գումարն է Ե. Ա. 553,397

Ուրկէ զեղչելով Արֆալուի հողին՝ գնման յատկացուած մասը Ե. Ա. 73,125	» 480,273
	Համագումար Ե. Ա. 2.870,995

Ծախսուած է՝

Նպաստներու համար	Ե. Ա. 1.649,250
20 Նախնական Դպրոցներու համար »	146,250

Մուշի Մ. Առաքելոց Վանքին, և

Տուղասարի վարժարանին

Հիմութեան	» 124,109	1.919,609
	Մնացորդը	Ե. Ա. 951,386

Միութեան ընդհանուր ծախքը եղած է	» 816,514	
	կը մնայ տրամադրելի գումար՝	Ե. Ա. 134,872

ի նպաստ 1911 Տարեցրջանին:

Միութեան Հիմնական Դրամագլուխը կը բարձրանայ՝
Ե. Ա. 10.015,187 էն, 30 Ապրիլ 1910 ին,
» 15.109,221 ի, 31 Դեկտեմբեր 1910 ին, այսինքն յաւելում մը
Ե. Ա. 5.094,034 ի՝ որ գործածուած է պետական և այլ առաջնա-
կարգ արժեթուղթներու գնման, բացի Ե. Ա. 791,250 ի գումա-
րէ մը՝ որ կը ներկայացնէ անշարժ կալուածով եղած նուիրատու-
ութիւնները, ինչպէս և Ե. Ա. 1.319,335 ի պատրաստ դրամէն՝ որ
Գրէտի Լիօնէի մօտ պահ դրուած է, և հաշուեիակէն վերջ նոյնա-
պէս արժեթուղթներու վերածուած է:

Պարտականութիւն կը սեպեմ մատնանիշ ընել Հայկական
Բնդ. Միութեան տումարներուն կանոնաւոր և ուղիղ բռնուածքը՝
իր պաշտօնին բարձրութեան վրայ գտնուող պաշտօնեայի մը կողմէ,
և ինծի ուրիշ բան չիմնար բայց եթէ հրաւիրել ձեզ որ վաւերացնէք
հաշիւնները այնպէս ինչպէս որ ձեզի ներկայացուած են:

Գահիրէ, 27 Մարտ 1911

(Ստոր.) Ե. ՓԱՓԱԶԵԱՆ

Յետոյ կը ձեռնարկուի Օրակարգի հետեւեալ Խնդիրներուն
քուէարկութեանը:

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Բնդհանուր Ժողովը կը քուէարկէ եւ Կ'ընդունի յետագայ
որոշումները.

1. — Աւերացում հաշիւներու.

Ժողովը, միաձայնութեամբ, կը վաւերացնէ 1 Մայիս — 31
Դեկտեմբեր 1910 Շրջանին հաշիւնները, այնպէս ինչպէս որ ներկա-
յացուեցան իրեն, և Կեդր. Ժողովը իր նախորդ վարչութեանը
համար պարտազերծ կը կացուցանէ:

2. — Անուանում հաշուեիննիդի.

Ժողովը, միաձայնութեամբ, կ'արտօնէ Կեդր. Ժողովը հաշ-
ուելքնիշ մը ընտրել, 6 րդ Շրջանի համար (1911):

3. — Կանոնագրի բարեփախում.

Ժողովը, միաձայնութեամբ, կ'որոշէ հետեւեալ բարեփոխու-
մը մայնել կանոնագրին 15 րդ Յօդուածին մէջ, այսինքն՝

15 րդ Յօդուածին Գ. Հասուածին 2րդ տունը սապէս բարե-
փոխուած է.

«Վերանորոգումը պիտի կատարուի ներկայ Յօդուածին բ.
հատուածին տրամադրութեան համաձայն տարին անգամ մը կիսովին:
Եթէ անդամներու ամբողջական թիւը անզոյդ է, առաջին վերանո-
րոգումը կեսէ մեկ պակաս անդամներու համար պիտի լրաց: Վի-
ճակար դադրած անդամները վերլեսրելի են:»

Ժողովը յիսոյ միաձայնութեամբ կը քուէարկէ չնորհակալութիւններ Վաեմ. Պօղոս Փաշա Նուպարի և Կեդր. Վարչ. Ժողովի միւս անդամներուն.

Ժողովը նմանապէս միաձայնութեամբ, յունկայս կը քուէարկէ չնորհակալութիւններ՝ Կեդր. Ժողովին Տեղեկագրին մէջ յիշատակուած այն ամէն բարեսէր ազգայիններուն, որ իրենց անձնութիւնը ցոյց տուած են դէպի Միոթիւնը, ըլլայ իրենց օժանդակութեամբ՝ Տեղական Մատնաժողովներու կազմութեան գործին մէջ, ըլլայ իրենց նուիրատուութիւններով։

Օրակարգը սպառած ըլլալով, Ատենապետը նիստը վակուած կը հոչակէ։

Ատենապիր

Քուէիսոյզ

(Ասոր.) Վ.ԱՀԱՆ Մ.Ա.Լ.ԵԶԵՍ.Ն

(Ասոր.) ՍԵՐԻՍ.Բ ԴԱ.ԻՒԹԵԱ.Ն

(») ԱՐԱ.ԲԵԼ ՓԱ.ՓԱ.ԶԵՍ.Ն

Ատենապետ

(Ասոր.) ՊՈՂ.ԱՍ ՆՈՒՊԱԼ.Բ

ՀԱՅԿԱԿԱՆ

ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

50Դ ՇՐՋԱՆԻ

(1 Մայիս — 31 Դեկտեմբեր 1910)

ՀԱՇՈՒԵԿՇԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐ 5^{րդ} Երջան (1 Մայիս —

4 13 2

ԴՐԱՄԱԳԻՆ		Ե. Ա.		Ե. Ո.					
I. Հիմնական . —									
Ա. Արժեքուղիւներ .									
10 Մնացորդ 4 Մայիս 1940 ին	9.341,7238								
20 Գնուած 5րդ Երջանին մէջ	<u>3.656,9123</u>	12.998	6361						
Բ. Դրամ .									
Պատրաստ դրամ Գրէշի Լիօնէի մօս		1.319	3358						
Գ. Աշխարհականեր .									
10 Նուպարիէի մէջ հող (70 ֆէս. 12 քրամ, 13 սահմ)	352,5000								
20 Իզմիրի մէջ խանութ մը	<u>438,7500</u>	791	2500	15.109	2219				
II. Մասնաւոր (Կանխորոշ նորագույն համար) . —									
Ա. Խառնած հեղ Հարժարանի բն համար .									
Մէօթէմէսեան կտակ (24 ֆէսան, 9 քրամ, 15 սահմ հող)		3.000	—						
Բ. Ավելիույ մէջ Ոբբանուց-Վարժարանի բն համար .									
10 Քէլէկեան Խանի նուրատուութիւն (37.500 ֆր.)									
Հողի գնում եւ շինութեան նախնական ծախը	492,3430								
Պատրաստ դրամ Գրէշի Լիօնէի մօս	<u>962,9695</u>	1.455	3125						
20 Մնացորդ Կիլիկիոյ ի նպաստ վիճակահանութեան		481	7300						
Գ. Խառնած Գուլֆանցին Ոբբանուցին է համար .									
Նուէր Տ. Սեղրաք Դաւիթեանի (919 քառ. մեթր հող Մահմաշայի մէջ)		135	—						
Դ. Անուան Ներակաւեան Հարժարանի մարտարարութեան համար .									
Նուէր Տ. Սեղրաք Դաւիթեանի (1500 քառ. մ. հող Տէմիրսաշի մէջ)		225	—						
Ե. Գիւղացին Խանին վարչութեան Հարժարանի մարտարարութեան համար .									
Նուէր Բարիզի Հայկագեան Ռևուլյունարիաց Ընկերութեան									
Արժեթուղթ	573,4755								
Դրամ	<u>18,9010</u>	592	3765	5.889	4190				
Փոխադրելի									
				20.998	6409				

ԵԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ

31 ՊԵՂՏԵՎՐԻ 1910)

MURSÉ

ՀԱՇՈՒԵԿՑԻՌ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐ
5^{րդ} Շրջան (1 Մայիս —

Գ Ո Յ Ք

	Ե. Ա.	Ե. Ա.
Փոխադրեալ	20.998	6409
ԱՆՇԱՐԺ ԿԱԼՈՒԱԾՆԵՐ		
1o Պահեսի գումար՝ Թոքատի Մէօթէմէտեան վարժարանին համար	46 5425	
2o 500 Տէօնիւմ հող Արքալուի մէջ (Կիլիկիա)	120 5100	167 0525
ԿԱԶ ԿԱՐԱՍԻԿ		
1o Պատրաս կան կարասիք՝ 1 Մայիս 1010 ին	15 9000	
2o Նոր գնումներ՝ 5րդ Շրջանին մէջ	24 9670	40 8670
ՊԱՏՐԱՍ ԴՐԱՄ		
Քերթիւն Ոբանոց Զոր-Մորպառի ՀՀ (Պատրասաւորութեան).	941 9898	
Պահեսի գումար՝ որերու խնամաւորութեան ծախքերու համար		
Առանց Հայութ.	195 —	
Նուիրատութիւն (Պայմանաւոր)		
Տրամադրելի Դրամ.	94 0048	1.230 9946
Փոխադրեալի պատրաս դրամ.		
Փոխադրեալի	22.437	5550

ԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ (օմք.)
31 Դեկտեմբեր 1910)

ՊԱՐՏ

	Ե. Ա.	Ե. Ա.
Փոխադրեալ	20.998	6409
ԱՆՇԱՐԺ ԿԱԼՈՒԱԾՆԵՐ		
1o Զուս եկամուս ինպաս Թոքատի Մէօթէմէտեան վարժարանի .	46 5425	
2o Գնում 500 Տէօնիւմ հողի Արքալուի մէջ (Կիլիկիա)	120 5100	167 0525
ՔԵԼԵԿԵԱՆ ՈՐԲԱՆՈՅ ԶՈՔ-ՄԱՐԶՈՒԱՆԻ		
1o Մնացորդ 1 Մայիս 1910 ին	349 3201	
2o Մանչէսթի անդամավճարներու 1/6 ը	240,5385	
3o Տարեկան նպասներ	364,7620	
4o Զանազան նուիրատութիւններ	171,4492	
	776 7497	
	1.126 0698	
ՃԱԽԻՔ — Միացեալ Որբ. Ընկ. որբերուն համար	89,3800	
Կիլիկիան 60 որբերուն	94,7000	
	184 0800	
ՊԱԶԵՍ		941 9898
Ա Խ Ա Ն Դ Ի Հ Ա Շ Ի Ի		
Ժաւանգութեան մը առթիւ պայմանաւոր նուիրատութիւն		195 —
ԶԱՆԱԶԱՆ ՀԱՍՈՅԹ		
Ա. Հիման Ելամուդ.		
1o Մնացորդ 1 Մայիս 1910 ին	553 3979	
2o Անդամավճարներու 5/6ը 5րդ Շրջանին մէջ	2061,7136	
3o Արժեթուղթներու տոկոս ու կտրոն	164,8950	
4o Գրէտի Լիօնէի ընթացիկ հաշւոյն տոկոսը	40,0050	
	2.266 6136	
	2.820 0115	
ԶԵՂՋԵԼԻ հողի գնում (500 Տէօնիւմ Արքալուի մէջ)	73 1250	
Փոխադրեալի	2.746 8865	22.302 6932

ՀԱՇՈՒԵԿԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐ
5^{րդ} Շրջան (1 Մայիս —

Գ Ո Յ Ք

	Ե. Ո.		Ե. Ո.	
Փոխադրեալ		22.437	5550	
Համագումար		22.437	5550	Ե. Ո.

ԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ (նար.)
31 Պեկտեմբեր 1910)

Պ Ա Ր Տ Ք

	Ե. Ո.		Ե. Ո.	
Փոխադրեալ	2.746	8865	22.302	6932
Բ. Մահմառ Եվրոպ:				
1o Մուշի Ս. Առաքելոց վարժարանին ինպաս՝ Մուշի ճերսէսեանէ	26,6085			
2o Տուղասարի մլ.ջ (Սըլվազ) վարժարանի մը շինութեան համար Բրուլիսէնսի « Սըլվազի Ռւսումնասիրաց լնկ.» էն	97,5000	124	1085	
		2.870	9950	
Վ Պ Ա Ս Տ				
Ա. Հեմայա Եվրոպաներ:				
1o Բաշխուած զանազան նպասներ	1.649,2505			
2o 20 Նախն. վարժարաններուն վեցամսնայ ծախըր	146,2500			
		1.795,5005		
3o Բնդիսնուր ծախըր	816,5142			
		2612,0147		
Բ. Մահմառ Եվրոպաներ:				
1o Մուշի Ս. Առաքելոց վանքի վարժարանին 26,6085				
2o Տուղասարի (Սըլվազ) վարժարանին 97,5000		124,1085	2.736	1232
ՏՐԱՄԱԳՐԵԼԻ ՊԱՏՐՈՒՍ ԴՐԱՄ . . .				
			134	8718
Համագումար				
		22.437	5550	

ՀԱՅԿԱԿԱՆ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

ԵԿԱՄՈՒԽՏԻ ՀԱՇՈՒԽՑՈՅՑ

ՏՐԴ Շ Ր Ջ Ա. Ն Ի

(1 Մայիս—31 Դեկտեմբեր 1910)

ՀԱՇՈՒԵՑՈՅՑ

5րդ Շրջան (1 Մայիս —

ՄՈՒՏՔ

	Ե. Ա.	Ե. Ա.
ՀԻՄՆԱԿԱՆ ԶՊԻՏ ԵԿԱՄՈՒԻՏ		
Նախորդ շրջաններու (ընդհ. ծախքերը զեղչելէ վեց)	4.651	9334
ՄԱՍՆԱԿԻՈՐ ԵԿԱՄՈՒԻՏ		
Նախորդ շրջաններու	10.088	2770
	14.740	2104
ԵԿԱՄՈՒԻՏ 5րդ ՇՐՋԱՆԻ		
(1 Մայիս — 31 Դեկտեմբեր 1910)		
ՀԻՄՆԱԿԱՆ ԵԿԱՄՈՒԻՏ		
1օ Անդամակիցարներու 1/6 ը.	2.061.7136	
2օ Արժեկուղթներուն տոկոսն ու կրտնները . . .	164.8950	
3օ Գրէշի լիսնէի ընթացիկ հաշւոյն տոկոսը . . .	40.0050	
	2.266	6136
ՄԱՍՆԱԿԻՈՐ ԵԿԱՄՈՒԻՏ		
1օ Նուէր Մուշեղ Ներսէսեանի՝ Մուշի մէջ վարժարնի մը ի նպաս	26.6085	
2օ Նուէր Բրօլիսէնսի «Արվագի Ռևումնասիրաց ընկ.» Տուղասարի մէջ վարժարանի մը շինութեան	97.5000	
	124	1085
	2.390	7221
Համագումար		17.130
		9325

ԵԿԱՄՈՒԻՏՆԵՐՈՒ

31 Դեկտեմբեր 1910)

ԵԼՔ

	Ե. Ա.	Ե. Ա.
ՆՊԱՍՏ ՀԻՄՆԱԿԱՆ ԵԿԱՄՈՒԻՏԵՆ		
Նախորդ շրջաններու մէջ բաշխուած	4.098	5355
ՆՊԱՍՏ ՄԱՍՆԱԿԻՈՐ ԵԿԱՄՈՒԻՏԵՆ		
Նախորդ շրջաններու մէջ բաշխուած	10.088	2770
		14.186
		8125
ՆՊԱՍՏ 5րդ ՇՐՋԱՆԻ		
(1 Մայիս — 31 Դեկտեմբեր 1910)		
ՀԻՄՆԱԿԱՆ ԵԿԱՄՈՒԻՏԵՆ		
1օ Հողի գնում (500 սէնիւմ Արֆալուի մէջ)	73.1250	
2օ Գործածուած զանազան նպաստներ	1.649.2505	
3օ 20 նախնական վարժարաններուն վեցամսեայ ծախըրը	146.2500	
	1.868	6255
ՄԱՍՆԱԿԻՈՐ ԵԿԱՄՈՒԻՏԵՆ		
1օ Մուշի Ս. Առաքելոց վանքի վարժարանին	26.6085	
2օ Տուղասարի մէջ վարժարանի մը շինութեան	97.5000	
	124	1085
		1.992
		7340
Ընդհանուր ծախըր՝ 5րդ Շրջանին		
		16.179
		5465
		816
		5142
		16.996
		0607
		134
		8718
ՏԱՐԱՎԱՐԵԼԻ ՊԱՏՐԱՍ ԴՐԱՄ		
Համագումար		17.130
		9325

ՅԱՐԱԿԻՑ

ՊԱՏՔՆԵՐ, ՀԱՇՈՒՑՈՅՑՆԵՐ, ԱՆԴԱՄԱՑՈՒՑԱԿՆԵՐ,
ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆՆԵՐ, ԶԵԿՈՅՑՆԵՐ, ԵՒՆ.

U. —

Հ. Բ. ՄԻՈՒԹԵԱՆ ԱՐԺԵԹՈՒՂՑՆԵՐԸ

(Գրեսի Լիօնի դրամատան մեջ պահ դրուած)

f. —

ՀԱՄԱՐԺԵՔ ԵԳԻՊՏԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐՈՒ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՈՍԿԻՆ Կ'ԱՐԺԵ'

100 Եղիպտական դրույթ (Ե. Դ.)

կամ 1000 միլիէմ .

26 drwif.

20 տիկն 6 բէննի .

5 solmr.

9 րուպի եւ 72 կոպէկ.

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՈՍԿԻՆ Կ'ԱՐԺԵ' Ե.Դ. 97,50

ՕՍՄԱՆԵԱՆ ՈՍԿԻՆ Կ'ԱՐԺԵ » 87,75

ՖՐԱՆՍՈՎԱՆ ՌԵԿԻՆ, ԿԱՐԺԵ

(*) Գրէտի Լիօնէի Գահիքրէի Մասնածիւղին մօտ աւանդ զրուած են նաև՝ լատկանոնազրի 11րդ Յօդուածին՝ Կեղր. Վարչ. Ժողովի անձնիւր անդամի երաշխաւորութեան գումարը ներկայացնող 200 անգլ. ոսկիի համարժէք արժեթուղթները

ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽԻ ԵՒ ԵԿԱՄՈՒՏԻ ՀԱՇԻԽՆԵՐՈՒ

(1 Մայիս 1906 — 31 Դեկտեմբեր 1910)

հոգս 8 Պատմութեա

ԵՐԱՎՈՐԻՆԻ ՀԱՅԻ

Հ Ի Մ Ն Ա Կ Ա Ն . —		Ա Ա Խ Ա Խ Ա Ր Դ Ա Բ Ա Ն Ա Ն Ա Ր	5 րդ Ե Ր Ջ Ա Ա Ր	Հ Ա Մ Ա Գ ՈՒ Մ Ա Ր			
		Ա Մ Ա Խ Ա Խ Ա Ր Դ Ա Բ Ա Ն Ա Ն Ա Ր	1 Մ ա յ լ ի ս - 3 1 Դ ե կ տ . 1 9 1 0				
b.	0.	b.	0.	b. 0.			
Ն ո ւ ի ք ա ս ո ւ ր ի ն .	• • • • •	1.582	6482	1.659	1428	3.241	7910
Մ ո ւ է ֆ ի ս ո ւ ր ֆ .	• • • • •	7.539	1086	2.974	4388	10.513	5474
Ա մ ր ա մ ա լ ի ք ա ր մ ե ր ո ւ	1 6 թ .	893	4310	460	4525	1.353	8835
		10.015	1878	5.094	0341	15.109	2219
Մ Ա Ս Կ Ա Ւ Ո Ւ . —							
Կ ա մ ի ս ո ւ ր ո ւ ց ն ո վ ա ս ա լ ի հ ա մ ս ւ ր ե ր ա ծ կ տ ա կ ի բ ո ւ ի ր ա ս ւ ր ը ք ի ն ն ե ր	• • • • •	4.804	1751	1.252	2964	6.056	4715
Հ ա մ ա պ ո ւ մ ս ւ ր .	• • •	14.819	3629	6.346	3305	21.165	6914

Ելամուշ Հաչի

ՀիՄՆԱԿԱՆ ԵԽԱՄԻՒԾ		ՄԱՄԱԿՈՐ ԵՎԱՄԻՒԾ		Համագումար ՀԻՄՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ	
Անդամականացնելու 5/6 թ	Տոկոս եւ կտրմ	Անդամականացնելու բառությունը.	Զանազան հաճախական համարներու բառականությունը.	Անդամականացնելու բառությունը.	ՀԱՄԱԳՈՒՄԱՐ
b. 0. 4,466,1454	b. 0. 1,073,9600	b. 0. 3,598,1800	b. 0. 6,490,0970	b. 0. 15,628,3824	b. 0. 18,019,1045
5րդ Շրջան (1 Մայիս - 31 Դեկ. 1910)	2,061,7136	204,9000	124,1085	—, —	2,390,7221
Համագումար	6,527,8590	1,278,8600	3,722,2885	6,496,0970	18,019,1045

ԲԱԺԿՈՒԱԾ ՊՐԻՋԱԾ		ՊՐԻՋԱԾ ՆՊԱՍՆԵՐ		ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԳՈՒՄԱՐ	
Հիմնական եկամուտներ	Նորություններէն	Համագումար նորություններ	Համագումար նորություններ	ՀԱՄԱԳՈՒՄԱՐ	ԳՈՒՄԱՐ
b. 0. 4,098,5355	b. 0. 3,598,1800	b. 0. 6,490,0970	b. 0. 14,186,8125	b. 0. 888,1720	b. 0. 15,074,9845
5րդ Շրջան (1 Մայիս - 31 Դեկ. 1910)	1,808,6255	124,1085	—, —	1,992,7340	816,5142
Համագումար	5,967,1610	3,722,2885	6,490,0970	16,179,5465	17,884,2327

(1 Մայիս — 31 Դեկտեմբեր 1910)

Թիհ	Տեղական Մասնաժողով	ՀՀ Հայաստան	Սալուգարիան Անհանդապահ Հարստություն	Սոհացին Տնիք	Արևաշտաց- ձար	Կերը Ժ Պ Ա Վ Ա Շ (Ա Մայիս — 31 Դեկտեմբեր 1910)	Հարցուսու- ռի Փ Ի Խ Ե Կ Ե Ւ	Հարցուսու- ռի Փ Ի Խ Ե Կ Ե Ւ
1	Գանիդէ	566	9.162,50	7.106,30	68.702,—	5.176,25	80.984,55	v. 9.
2	Ավելանիդրիա	160	3.105,—	1.615,—	23.179,—	2.280,50	27.074,50	—
3	Խարիսմ	32	325,—	—	—	—	—	—
4	Ա. Պոլիս	272	4.695,—	150.515,90	35.262,65	40.714,35	226.492,90	—
5	Խզիդր (Եւ Մամիսա)	557	4.420,—	6.127,42	36.126,78	234,64	42.488,84	—
6	Աքիօն Գարսո-Հասար	39	203,—	1.589,—	1.855,50	—	3.445,50	—
7	Մերսին	64	442,—	600,—	2.467,—	82,50	3.149,50	—
8	Ասմաս	—	—	—	—	—	—	—
9	Միս	29	163,—	—	—	—	—	—
10	Խոփէտրոն	23	147,—	913,50	519,—	—	1.432,50	—
11	Զնի-Մարզուան	59	315,50	6.005,—	635,80	—	6.640,80	—
12	Վան	88	877,50	6.332,75	3.964,35	427,—	10.724,10	—
13	Էրզրում	—	—	—	—	—	—	—
14	Երզնկա	69	538,—	1.735,—	3.159,—	—	4.894,—	—
15	Խարիսմ	—	—	—	—	—	—	—
16	Տիարալֆիր	89	399,—	3.033,—	3.057,90	23,30	6.114,20	—
17	Մըլազ	102	636,—	6.595,90	865,80	175,50	7.637,20	—
18	Թօհար	47	351,50	3.479,—	1.435,—	44,—	4.958,—	—
19	Էմիլիար	32	241,—	1.532,50	1.520,—	—	3.052,50	—

20	Գայանէրի	—	—	—	—	—	—	—
21	Տրագիզն	15	146,—	—	—	—	—	—
22	Սալոմոն	16	197,50	—	—	—	—	—
23	Պոռսան	56	488,—	1.505,—	—	—	1.505,—	—
24	Պամարտն	51	338,—	1.101,50	862,30	—	1.963,80	—
25	Զաման-Քալէ	30	136,—	391,30	633,95	32,45	1.057,70	—
26	Հալէպ	85	544,—	2.249,75	4.366,—	279,25	6.895,—	—
27	Ալիքապ	—	—	—	—	—	—	—
28	Պէյրուք	50	274,—	820,—	1.260,—	—	2.080,—	—
29	Երևանդէմ	19	185,—	1.595,35	921,—	77,15	2.593,50	—
30	Մէլանիկ	30	335,—	5.362,50	—	—	5.362,50	—
31	Էշիրէլ	58	386,—	5.533,58	—	—	5.533,58	—
32	Լոնսօն	14	109,50	—	—	—	—	—
33	Մանչէպր	115	2.327,80	10.715,25	4.811,02	—	15.526,27	—
34	Մարսիլիա	20	1.124,50	—	2.467,—	46,50	2.513,50	—
35	Վ. ի բ ն ի ն	18	218,15	2.386,—	1.437,—	1.356,70	5.176,70	—
36	Պրիւնէլ	—	—	—	—	—	—	—
37	Անվերս	18	412,75	5.361,92	—	—	5.361,92	—
38	Ֆընէլ	8	181,30	—	—	—	—	—
39	Ֆիլոդ	41	435,—	1.584,50	1.856,25	31,—	3.471,75	—
40	Առարտ	19	149,50	578,58	1.078,44	19,28	1.676,30	—
41	Թուխման	—	—	—	—	—	—	—
42	Նիւ-Խօր	197	1.810,—	10.740,—	9.115,—	—	19.855,—	—
43	Պուրօն	169	1.090,—	—	951,—	—	951,—	—
44	Աւար	112	608,—	889,50	2328,—	—	3.217,50	—
45	Ֆրէգիօ	158	1.925,—	5.446,—	11.303,37	100,—	16.849,37	—
46	Բրովիստն	63	325,—	880,—	2310,0,—	920,—	4.100,—	—
	Գործադրելի	3611	39.942,—	254.321,—	228.441,11	52.020,37	534.782,48	—

ԲԱՆԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒ

(1 Մայիս — 31 Դեկտեմբեր 1910)

Թիվ	ՑԵՆՏՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ	ՀԱՅԱԳԻՆԱԿԱՆ ՀԱՅԱԳԻՆԱԿԱՆ	ԱՅԱՀԱՐԱՐՈՒՄ		ԿԵԴՐՈՒՄ ՓՈՂՈՎԻՆ ԿՐԿՈՒՄ		ՀԱՄԱԿՈՒՄԱՅԻՆ ԴԱՄԱԿՈՒՄԱՅԻՆ
			ԱՎԱՏԳԻ	ՏԱՐԱԾՔԻ	ԱՎԱՏԳԻ	ՏԱՐԱԾՔԻ	
47	Թիշմին	3611	39.942,—	254.321,—	228.441.11	52.020.37	534.783.48
48	Բօքաթիք-Սէլքրլ Ֆօլս	10	50,—	329.13	223.50	81.20	633.83
49	Տիւ. Պիթէլի	50	265,—	319.40	1.552.50	552,—	2.423.90
50	Պրամիլի	11	55,—	449.55	469.55	58.65	977.75
51	Պրիմուորը	32	160,—	400.45	1.439.60	611.78	2.451.83
52	Խար-Բէլսրին	20	105,—	—	487.60	—	487.60
53	Բարէրովն	29	135,—	75.9,—	1.191,—	—	1.950,—
54	Միտարո	22	110,—	366.75	287.50	—	654.25
55	Լորէնս.	38	190,—	390,—	—	—	390,—
56	Լէմինորը	—	—	360,—	240,—	—	600,—
57	Լին	8	40,—	—	—	—	—
58	Ֆիտսլֆիս	8	40,—	—	—	—	—
59	Փրոլ	—	—	145,—	—	—	—
60	Ուլու-Հուզօվըն	26	225,—	—	—	—	—
61	Հարթըրը	45	—	—	—	—	—
		—	—	—	—	—	—
		3910	41.462,—	257.695.28	234.332.36	53.324,—	545.351.64
		37	1.845,—	39.748.60	17.884.25	102.705.55	160.338.40
		3947	43.307,—	297.443.88	252.216.61	156.029.55	705.690.04
	ԶԱՄԱԳԱԳԱԳԻՆԻՐԸ (ուղղակի)						
	ՀԱՄԱԳՈՎՈՐԱԿ	3947					

— 65 —

6. —

ՑՈՒՑԱԿ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԸ. ԲՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱԿԱՆ ԵՐԸ

(ՍԴԵՐԴԻ ՇՐՋԱՆԱԿ)

1. Սդերդ. — Ծաղկոց (բացում 4 Ապրիլ 1910).

Աշակերտ	•	•	•	•	•	•	76
Ուսուցիչ	•	•	•	•	•	•	2

Տարեկան ծախս 0. Ա. 21

2. Տեհ. — Վարժարան (բացում 1 Մեկս. 1910).

Աշակերտ	•	•	•	•	•	•	90
Ուսուցիչ	•	•	•	•	•	•	3
Տնտես	•	•	•	•	•	•	1

Տարեկան ծախս 0. Ա. 39,25

3. Զոգ. — Վարժարան (բացում 20 Մարտ 1911).

Աշակերտ	•	•	•	•	•	•	32
Ուսուցիչ	•	•	•	•	•	•	1
Տնտես	•	•	•	•	•	•	1

Տարեկան ծախս 0. Ա. 17

4. Ոճուռան. — Վարժարան (բացում 1 Ապրիլ 1911).

Աշակերտ	•	•	•	•	•	•	40
Ուսուցիչ	•	•	•	•	•	•	2
Տնտես	•	•	•	•	•	•	1

Տարեկան ծախս 0. Ա. 30

5. Տուսատափ. — Վարժարան (բացում 4 Սեպ. 1911).	
Աշակերտ	33
Ուսուցիչ	1
Տնտես	1

Տարեկան ծախս 0. Ռ. 18

6. Գուպին . — Վարժարան (բացում 2 Մարտ 1911).	
Աշակերտ	44
Ուսուցիչ	2
Տնտես	1

7. Մալաթիան . — Վարժարան (բացում 22 Մարտ 1911)	
Աշակերտ	25
Ուսուցիչ	1
Տնտես	1

8. Հազգօ. — Կարմարան (բացում 4 Սպտի 1941).	
Աշակերտ	89
Ուսուցիչ	3
Տնտես	1

(Տիկորդիքիքի Շըշանիկ)

9. Հազրո. — Վարժարան (բացում 4 Սեպ. 1910).	
Աշակերտ	120
Ուսուցիչ	3
Տնտես	1
Տարեկան ծախս 0. Ռ. 46,50	

10. Կրասիրա . — Վարժարան (բացում 1 Յունիկ 1911).	
Աշակերտ	70
Ուսուցիչ	2
Տնտես	1
Տարեկան ծախս 0. Ռ. 32	_____

11. Քէրիք. — Կարժարան (բացում 1 Յունիվ 1911).	
Աշակերտ	25
Ռւսուցիչ	1
Տնօրեն	2
Տարեկան ծախս 0. Ռ. 20	_____

12. Կունսկնանո . — Վարժարան (բացում 1 Յունիս 1911) .	
Աշակերտ	35
Ռւսուցիչ	1
Տնտես	1
Տարեկան ծախք 0. Ռ. 22	_____

13. Հաշքեր. — Կարծարան (բացում 1 Յունիվար 1911).	
Աշակերտ	45
Ուսուցիչ	1
Տնտես	1
Տարեկան ծախս 0. Ռ. 16	_____

14. Հելին . — <i>Sardurawani</i> (բացում 4 Յունիվար 1911).	
<i>Աշակերտ</i>	35
<i>Ուսուցիչ</i>	2
<i>Տնտես</i>	1
<i>Sardurawani ծախս 0. Ռ. 16</i>	_____

15. Պաշնիք . — Վարժարան (բացում 1 Յունիկար 1911) .	
Աշակերտ	35
Ուսուցիչ	1
Տնտես	1
Տարեկան ծախիք 0. Ռ. 18	_____

16.	Խարբունար. — Վարժարան (բացում 1 Ապրիլ 1911).	
Աշակերտ	•	25
Ուսուցիչ	•	1
Տնտես	•	1
Տարեկան ծախս 0. Ա. 20		_____

(Կիլիկիոթ Շրջաններ)

17.	Ֆեֆկ. — Վարժարան (բացում 1 Մենց. 1910)	
Աշակերտ	•	35
Ուսուցիչ	•	1
Տարեկան ծախս 0. Ա. 8		_____

18.	Կապան. — (բացում 1 Նոյեմբեր 1909)	
Աշակերտ	•	63
Ուսուցիչ	•	2
Տարեկան ծախս 0. Ա. 29		_____

19.	Ալպիստան. — Վարժարան (բացում 1 Սեպտեմբեր 1909)	
Աշակերտ	•	75
Ուսուցիչ	•	2
Տարեկան ծախս 0. Ա. 15,75		_____

20.	Քեպուսիկ. — Վարժարան (բացում 1 Ապրիլ 1911).	
Աշակերտ	•	70
Ուսուցիչ	•	2
Տնտես	•	1
Տարեկան ծախս 0. Ա. 30		_____

21.	Շար-Տէրէ. — Վարժարան (բացում 1 Յունվար 1911).	
Աշակերտ	•	70
Ուսուցիչ	•	2
Տնտես	•	1
Տարեկան ծախս 0. Ա. 23		_____

Զ. —

ԳՆԱՀԱՏԱԳԻՐ

ԳԵՐԵԲՋ. Կ. - ՊԱՏՐԻԱՐՔ ՊՈՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ. ԹԷՐՁԵԱՆԻ

ՎԱԵԽԱՓԻԱՅԼ Տէր և Աղնուաշուք Տիարք,

Բաժին են մարդկութեան աշխարհի տառապանքներն. ամէն ուրուք անձնական փորձն վկայութիւն մըն է անժխտելի այս ճշշմարտութեան, զի ամէն վիճակ, ամէն կացութիւն և դիրք ունի այս աշխարհիս վրայ իւր նեղութիւնները. պանդուխտ մըն է մարդու արտասուաց վայրի մը մէջ, ուղեւոր դէպի յաւիտենական երանութեան զոր սուրբ Հաւատքն կ'ապահովեն և ինքն իսկ կըզգայ և առ այն կը ձգտի ի բնէ: Այս բնածին զգացումէն կը բղխի աստի կենաց բարօրութեան բաղձանքն որ ի ներքուստ կը յորդորէ և կը մղէ զմարդ իւր մերձաւորին ևս երջանկութեան նպաստամասոյց մղել անոր վիշտերն: Աստուածային բարեգութ նախախնամութեան որոշ յատկանիշ մըն է այս զգացումն ի մարդ, որ կ'աղնուացնէ զինքն և կը մերձեցնէ առ Աստուած տուիչն ամենայն բարեաց եւ աղբիւր երջանկութեան: Մեծ Բարերարն աշխարհի Տէրն մեր Յիսուս Քրիստոս նուիրագործեց, սրբացուց այս բնական զգացումը, սփռելով ամենուն վրայ, խօսքով և արդեամբ, իւր աստուածային սիրոյ և գթոյն բարերար և վրկագործ սրբագուներն, անմահ երանութեան վարձեր խոստանալով բաժակ մը ջրոյ համար և պատուիրելով առ հասարակ ամենուն սիրել իւր ընկերն իբրեւ իւր իսկ անձն: Այս սկզբան վրայ հիմնեցան բարեգործական Հաստատութիւններն և ընկերութիւններն որք փառաց մի սքանչելի պսակ հիւսեցին Քրիստոնէական սուրբ կրօնի:

Ուրախ եմք, ՎԱԵԽԱՓԻԱՅԼ և Աղնուաշուք Տիարք, և յոյժ կը մխիթարուինք նկատելով «Հայկական Բարեգործական Բնդի».

Միութեան» մէջ մի նոր ցոլացում մեր սուրբ կրօնի վարդապետութեան, որոյ վրայ հիմնեալ տեսնել կը բաղձանք, և է անշուշտ, բարերար Ընկերութիւնդ, որ նպատակ ընտրած է իրեն մեր ժողովրդեան նիւթական և տնտեսական վիճակը բարւոքելու, մըտաւոր և բարոյական ճշմարիտ և քրիստոնէական գարդացման նպաստելու:

Զեր այս վաեմ ձեռնարկն իւր նիւթական և ժամանակաւոր միջոցներով, պատուական ձեռնուու կրնայ հանդիսանալ քրիստոնէական սուրբ կրօնի հոգեւոր և յաւիտենս. աման նպատակին, և այս փոխադարձ օժանդակութեամբ կը յաջողի մարդկութեան ճշմարիտ բարեկեցութիւնն զոր ի վերուստ կը կարգադրէ և կը հոգայ նախախնամողն Աստուած, որ կ'ուղղէ ամէն ինչ ի բարի և յերանաւէտ վախճան:

Գովկելի է, Վաեմափայլ և Աղնուաշուք Տիարք, այս վախճանի դիմող Զեր ձեռնարկն, ընտիր է անոր նպատակն և գնահատելի Զեր ջանքերն. արդիւնալից պիտի ըլլան առաջի Աստուծոյ մեր կարօտ և վշտակիր ժողովրդեան Զեր մատուցած բարիքն:

Եւ մենք կը մաղթենք Զեր ի Տեառնէ ամէն բարիք, յաջողութիւն և երջանիկ օրեր:

Ի Բերա կ. Պոլսոյ,
13/26 Յուլիս 1911

(ԱՅԻ)

Աղօրաւար
(Սուր.) ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ. ԹէՌԶԵՍՆ
Կրդկո. - Պարք. Տանն Կիլիկիոյ

Է. —

ԳՆԱՀԱՏԱԳԻՐ

Բարձրապատիւ Պօղոս Փաշայի Նուպար,
Նախագահի Հայկական Բարեկործական Ընդհ. Միութեան,
ի Գահիրէ,

Ողջոյն և օրհնութիւն.

Հայկական Բարեկործական Միութեան տարեկարձը նոր առիթ մը կ'ընծայէ ուշադրութեան առնելու և զնահատելու այն կարեւոր ծառայութիւններն, զոր այս մարմինը կոչուած է մատուցանելու: Մեր աղօրային կարօտութեանց կատարեալ ըմբռնումովը, գործնական հիմնագծով, ողջամիտ ուղղութեամբ և անյօղդող գործնական հիմնագծով, ուղարկեալ նաև գէպի առաջադրած նպատակն, եւ յարատեւութեամբ կը գիմէ նա գէպի առաջադրած նպատակն, եւ իր էութիւնն, որուն պէտքն այնքան զգալի եղած էր, կը սկսի փայլի գործունէութեամբ և արդիւնքներով, և արժանի փայլի սանրային համակրանքի և ձեռնատուութեան:

Գոհութեամբ կը խնդակցիմք իր յաջողութեանն համար, եւ մաղթեմք ի արտէ որ պայծառանան իր ջանքերն և ձեռնարկելու, և ապագային մեր աղգային տարեկորութեանց մէջ կարենայ նիրն, և կարօտեալները կրցան փրկուիլ չքաւորութենէ, և հանրային ու կարօտեալները կրցան փրկուիլ չքաւորութենէ, և հանրային ու դորմութեամբ ապրելու դանագին հարկէն:

Եւ այս յիշատակութիւնք, Բարձրապատիւ Փաշա, պիտի կազմեն Զեր հովանաւորած Հայկական Բարեկործական Միութեան փառքն ու տրիտուրը:

Կ. Պօղիս, 14/27 Մայիս 1911

Մնամք աղօթարար

Վասնկագին կենաց Զերոց՝

Պատրիարքական Տեղապահ

(Սուր.) Վ. Ա. Հ. Յ. Մ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆԿՈՒՆԻ

լ. —

ՇՆՈՐՉԱԿԱԼԻՔ

Վ. Ա. Ն Ի Վ. Ա. Բ Ճ. Ա. Պ Ե Տ Ս. Ն Ո Յ Ի Ն Ա. Ա. Թ Ի Ւ

Պատկառելի Տեարք,

Լրագիրների մէջ՝ Խիստ բերկրառութիւնը լուր մը կարդացինք. այն է՝ Հայոց Բարեգործական Միութեան Պատկ. Վարչութիւնու որոշած է Վանի մէջ վարժապետանոց մը բանալ:

Մեր բազմակարօտ հայրենիքի, ամենակենսական մէկ պէտքն է որ պիտի լրացնէ լաւ կազմակերպուելիք այդ հաստատութիւնը, որ ի հարկէ ներկայ հանգամանքներու մէջ՝ Վասպուրականցին հընարաւորութիւն չունէր ի գլուխ բերելու և հետեւաբար մեզ հետ և ամէն վանեցի հայու սիրալ, համակրանքով և երախտագիտութեամբ կը թրթռայ հանդէպ հայկական այն մեծ կաղմակերպութեան՝ որ «Հայոց Ընդհանուր Բարեգործական Միութեան» ցանկալի անունը կը կրէ:

Ստորագրեալքս, Վանայ բոլոր եկեղեցեաց Թաղականութիւնք և Հայկազնեան կեդրոնական Վարժարանի Խնամակալութիւնը, կուգանք այս առթիւ մեր խորին երախտագիտութիւնը յայտնել Պատ. Վարչութեանդ՝ այս բարեգէպ որոշման համար և յայտնել մեր ու ժողովուրդին պատրաստակամութիւնը, իրեն բաժին ինկած աջակցութիւնը նուիրելու՝ այդ մեծ ձեռնարկին:

Ընդունեցէք ուրեմն, Տեարք, մեր սրտագեղ յարգանքի
գգացումները՝

1941 Փետր. 14/27, Վան

(Ասոր.)

Դիւան Թաղականութեան Յայնկոյսներու
(Կահի) Ասենապիր Ասենապիս
նշան ԿԱՐՄԻՐՄՈՐՈՒԻՔ ԱԲՐԱՀԱՄ ԱԴԱԿԱՆԵԱՆ

Դիւան Թաղականութեան Նորաշինու
(Կահի) Ասենապիր Ասենապիս
Մ. ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԶՐԲԱՇԽԵԱՆ

Դիւան Թաղականութեան Արարի
(Կահի) Ասենապիր Ասենապիս
Մ. ՍԱՐՈՒԽԱՆԵԱՆ ՑՈՂԱՆՆԵՍ ՊԱՍԵԱՆ

Դիւան Թաղականութեան Ս. Յակոբի
(Կահի) Ասենապիր Ասենապիս
ԳԱՅԻԻԹ ՊՈՂՈՍԵԱՆ ՓԱՆՈՍ ՎԱՐՊԵՏԵԱՆ

Դիւան Քաղաքամէջ Միացեալ Թաղականութեան
(Կահի) Ասենապիր Ասենապիս
Ո. ՑՈՂՆԱՆԵԱՆ Գ. ՎԱՐԴԱՎԵՏԵԱՆ

Դիւան Թաղականութեան Հայկականի
(Կահի) Ասենապիր Ասենապիս
ՄԱՐՏԻՐՈՍ ԳՈՒԿԵԱՆ ՍԱՐԳԻՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Դիւան Խնամակարաքեան Հայկազ. Կեդր. Վարժարանի
(Կահի) Ասենապիր Ասենապիս
ԹԱՐԴՈՍ ՊԵՐՃԻՄԱՍԵԱՆ Փ. Մ. ԳԱՍՊԱՐԵԱՆ

թ . —

ԲԱՆԱԳԵՒ

ՈՒԿՍԹ-ՀՕՊՐԵՆԻ ՆՈՐՍԿԱՌԱՄ ՄԱՍՆԱՅԻՆԻ

«Մենք՝ ի ստորեւ սառբագրեալներու, լինելով Ամերիկայի Նիւ-
ծէրչի նահանգի, Հըտուն գաւառի, Ուէսթ-Հօպրեն գիւղաքա-
ղաքի Հայ գաղութի այն մասը, որ կը հաւատայ թէ գիւղակցու-
թեամբ ուրիշին բարիք ընելը մարդկային երջանկութեան լրումը
կը կազմէ, լսելով Գեր. Սերոբեան Մուշեղ Եպիսկոպոսէն՝ Եղիս-
տոսի Հայկական Բարեգ. Ընդհ. Միութեան մասին, և անոր
հրատարակած քառամեսայ տեղեկագրէն ամողեկանալով մանրամաս-
նորէն՝ թէ Հայկ. Բ. Ընդհ. Միութիւնը բարերար հանդիսացած է
մնօդնական որբին և անոք որբեւայրին. գթութեան հրեշտակ
դարձած է սովեալին եւ հրկիղեալին. ապաւէն եղած՝ ջարդէն
մաղապուր ազատած հալածականներին և վիրաւորներին, հայթայ-
թելով քաղցածին հաց, մերկին հագուստ, հիւանդին դեղ, վիրա-
ւորին վիրակալ, թալանուած մշակին խոր, կողովոտուած երկրա-
գործին հող. կանգնած է լուսոյ տաճարներ, զուլումի պատճառած
և տակաւին միսացող մոխրակոյաններուն վրայ. գարձուցած՝ բազ-
մաթիւ պանդուստներ իրենց հայրենիք, հոն կրկին շինելու իրենց
պապենական քանդած օճախները :

Մատքերելով նաև թէ ասմաց նման որքա՞ն աչքի չզարկած
և ձեռքի տակէ ծառայութիւններ մատուցած է տառապեալ հայ
ազգին, որոնք արձանագրութեան չեն կրցած առնուիլ:

Եւ նկատելով որ Հ. Բ. Միութիւնը Հայ ազգին մէջ ար-
դէն գոյութիւն ունեցող հարիւրաւոր Աղքատախամներէն, Որբա-
խնամներէն, Կրթասիրացներէն և Ուսումնասիրացներէն աւելի վեհ,
բարձ և նուիրական կոչում մ'ունի, այն է բարձրացնել Հայ ազ-
գը տնտեսականապէս և բարոյապէս այնքան՝ մինչեւ կարող ըլլայ
գէթ ինք իր տունը շինելու առանց օտարի օգնութեանը ձեռք

կարկառելու, ինքզինք իւր հայրենի Խրծիթին մէջ ապրեցնելու՝
առանց քանդիչ պանդխառութեան դիմելու, և իւր զաւակներն իւր
միջավայրին մէջ կրթելու և զարգացնելու, առանց օտարին գիրկը
նետելու:

Ներկայիւս երախտագիտութեամբ կը գնահատեմք սոյն Մի-
ութեան կազմութիւնը ու գործունէութիւնը : Շնորհակալութիւն
կը յայտնեմք անոր հիմնադիրներուն և ի մասնաւորի վահեմ. Նու-
պար Պօղոս փաշային, որը գեղեցիկ տիպար-օրինակ մը դարձաւ
հայ հարուստներուն՝ իւր օրինակին հետեւելու, քաջալեր եղաւ եւ
վատահութիւն ներշնչեց հայ արհեստաւորին և գրագէտին իրեն
գործակցելու, և լուսոյ ու յուսոյ ճաճանչներ ճառագայթեցուց
հաւասարապէս երկրագործի հոգեւարք անկողնին շուրջ, բռնապետ
տգիտութեան զոհերու աղջամղջին տանջարաններուն խորերն եւ
գունատ ու թորշումած մանկաստաններուն մէջ : Եւ պարտք կը հա-
գունատ ու թորշումած մանկաստաններուն միացնել Հ. Բ. Բ. Միութեան,
մարենք մեր չնչին ոյժերն ևս միացնել Հ. Բ. Բ. Միութիւնը», և առ այս
վատահ ըլլալով որ «միութեան մէջն է զօրութիւնը», և առ այս
կը կազմենք անոր Ուէսթ-Հօպրենի Մասնածիւղը :»

Ժ. —

ՔԱՂՈՒԱԾՔ

Տ. ՄԵՍՐՈՊ ՆՈՒՊԱՐԵԱՆԻ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿԵՆ

«Մեր դժբաղդ ազգին երախտագիտութեան ամենէն արժանի գործը անվիճելիորէն այս բարեգործական ընկերութիւնն է, որ ազգին համար աւագ կարեւորութիւն մը ունի, և որուն բարոյական վերականգնումին կ'աշխատի բարեբախտաբար։ Ոչ մէկ ընկերակցութիւն յլացուած և կազմուած է մեր մէջ, որուն օգտակարութիւնը այնքան մեծ և գործնական ըլլայ, կամ որ առաջնորդուած ըլլայ այնքան նշանաւոր և տիեզերական հոչակի մը արժանացած անձնաւորութենէ մը։»

ԺԱ. —

ՔԱՂՈՒԱԾՔ

Տ. ՍԵՂԲԱՅ ԴԱՒԻԹԵԱՆԻ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿԵՆ

«Զեր նախաձեռնութեամբ հիմնուած Հայկական Բարեգ. Բնդէ. Միութիւնը, որ չնորհիւ Զեր իմաստուն վարչութեան և Զեր ընկերներուն անձնուէր գործակցութեան, Ազգին կարօտեալներուն կ'օգնէ, որբերը կը պատսպարէ, անգործին աշխատութեան միջոց կը հայթայթէ, և մանուկներու համար ուսման տաճարներ կը հիմնէ, մարդասիրական այնպիսի բարձր ձեռնարկութիւն մըն է, որ ամէն հայու սիրաը երախտագիտութեամբ կը լիցնէ։

Զերմ հիացող մը ըլլալով Զեր հիմնած և վարած ազգային այս մեծ Հաստատութեան, և ծեր հասակիս մէջ փափաքելով յաւերժացնել իմ հիացմունքս, մանաւանդ որ ես իսկ երբեմն որբ մնացած ըլլալով՝ կեանքին դառնութիւնները ճաշակած եմ, ինչ որ աւելի ևս գնահատելի կ'ընծայէ իմ աչքիս Զեր պատուական ձեռնարկութիւնը։»

ԺԲ. —

ՔԱՂՈՒԱԾՔ

ՕՐ. ԱՆՆԱ ԶԱՄԻԶԻ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿԵՆ

«Օքնել տառապելոց, մխիթարել զվատացեալս, ուսուցանել զմանկունս և տպաւորել ի սիրտ ազգայնոց՝ հայութեան դրօշմը և հայրենասիրութեան եռանդը, այս էր իմ լուսահոգի եղբօրս փափաքն, և ուրախ եմ որ այս առթիւ իրագործած եմ նորա իղձն։ Ինչ որ խորհէր և խօսէր, յետ իւրոյ հանգատեան կատարուեցաւ։ Եւ ինքն այժմ աւելի գոհ պիտի ըլլայ յերկինս քան զմեղ։ Իցիւ թէ սոյն ընկերութեան գործունէութեան արդիւնքն փութով բազմանար և բարգաւաճէր և ձեռք կարկառէր շատ տապեալ և բազմիցս վշտացեալ Ազգիս։ Զայդ ի սրտէ մաղթեմ, որպէս և վաստակողաց ոյժ և երկարութիւն կենաց։»

ԺԳ. —

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԿՏԱԿՆԵՐՈՒ ԵՒ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԵԱՆՑ ԱՌԹԻՒ

Միութիւնը սիրայօժար կ'ընդունի կտակներ, ինչպէս եւ նուիրատոււրիւններ՝ թէ՛ իր հիմնական նպատակին եւ թէ՛ ուրիշ ազգուուրիւններ՝ իր հիմնական նպատակին մը համար։

Կեդր. Վարչ. Ժողովը հետեւեալ Յայտարարութիւնը սուրագրած է՝ Կտակներու եւ Նուիրատոււրիւններու յատուկ տոմարին հակասը։

«Այս տոմարին մէջ օրը օրին և թուականի կարգաւ պիտի արձանագրուին Հ. Բ. Բ. Միութեան կտակներուն, ինչպէս և մասնաւոր նպաստակի համար եղած նուիրատուութեանց վերաբերեալ բոլոր վաւերաթուղթները և այդ մասին փոխանակուած կարեւոր գրութիւնները :

Միութեան անդրանիկ կեդր. Վարչ Ժողովը, ներկայ յայտարարութիւնը կտակներու և նուիրատուութեանց տոմարին գլուխը դնելով, կ'երդնու կէտ առ կէտ և կատարեալ խղճմառութեամբ գործադրել կտակարարներուն և նուիրատուներուն կամքն ու բացայայտ արամադրութիւնները. կը խոստանայ ոչ մէկ գինով թոյլ տալ որ որիէ կամայական շեղում մը ըլլայ և կանխորոշ նպատակն տարրեր ուղղութեամբ գործածուին կտակուած և նուիրուած գումարները. յանձն կ'ամնէ մասնաւոր հոգածութեամբ մաստակարել Միութեան կողմէ պաշտօնապէս ընդունուած և սոյն տոմարին մէջ արձանագրուած բոլոր կտակները և նուէրները. և այժմէն պարտք կը դնէ իր յաջորդներուն վրայ՝ միեւնոյն ուխտը կրկնելով իրենց պաշտօնին սկիզբը՝ միեւնոյն յօժարամտութեամբ և նախանձախնդրութեամբ գործադրելու. Միութեան կտակներուն և նուիրատուութեանց յարակից պայմանները, առանց իրաւատէրին օրինական հաւանութեան՝ անոնցմէ ստորակէտ մը իսկ չիփոխելով :»

Գահիրէ,

Հ. Բ. Բ. Միութեան

1 Յուլի 1910 (Ն.Տ.)

Կեդր. Վարչ. Ժողովի Դիւան

(Ասու)

Աթենապետ	ՊՕՂՈՍ ՓՈՇԱ. ՆՈՒՊԱՐ
Փոխ-Աթենապետ	ԱՐԹԻՆ ՓՈՇԱ. ԵՎ.ԳՈԽՊ
Փոխ-Աթենապետ	Ե. Ա.Ա.Թ.ՕՆ ՊէՅ
Աթենապիր	Վ. ՄԱԼԻՔԵՍ.ԵՍ.Ն
Գանձապետ	Մ. Ա.ԴՐԱԽԻՆԻԵՍ.Ն
Խորհրդական	Ա.Բ.Ա.ԲԵԼ. ՊէՅ ՆՈՒՊԱՐ
»	Կ. ՊէՅ ՇԵԲԻՏԱՑԵՍ.Ն
»	ՏԻՐԱՆ ՓԻԼԻՊՈՍԵՍ.Ն

ԺԴ. —

ՀՐԱՀԱՆԳ

ՄԱՍՆԱԺԻՂՆԵՐՈՒ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հայկական Բարեկ. Բնդէ. Միութեան Կնդրոնական Վարչական Ժողովը, փափաքելով որ Տեղական Մասնաժողովներու կազմութիւնը օրինապէս և միաձեւօրէն կատարուի, օգտակար կը համարի ներկայ հրահանգով հրապարակել, որպէսզի թէ արդէն կազմուած և թէ այսունետեւ կազմուելիք Մասնաժողուները կէտառկէտ հետեւին Միութեան Կամանագրին արամագրութեանց, և այսպէսով կարելի ըլլայ կեդր. Ժողովին՝ անոնց օրինաւոր կազմութիւնը հաստատել, առանց լրացուցիչ ձեւակերպութեանց պէտք տեսնելու:

Ինչպէս յայտնի է, կեդր. Վարչ. Ժողովի արտօնութեամբ Տեղական Մասնաժողովներ կը մասն կազմուի այն ամէն տեղերը ուր Միութիւնը արդէն ունի գէթ՝ տասը անդամ (*). Հակառակ պարգային՝ Օժանդակ-Մասնաժողովներ միայն կը մասն կազմուի, մերձաւորագոյն Տեղական Մասնաժողովն կախնալ: Կեդր. Ժողովը կ'որոշէ ու կը սահմանէ իրաւանչիւր Մասնաժուղի՝ գործունէութեան շրջանակը և իրաւամտութեան սահմանը:

Տեղական Մասնաժողովները կը բաղկանան առնուազն Յանդամէ. բայց տեղույն պահանջներուն համաձայն՝ անոնց թիւը, կեդր. Ժողովի արտօնութեամբ, կը մասն ըլլալ 5 կամ աւելի:

Մասնաժողովի մը անդամներուն ընարութիւնը կը կատարուի Միութեան համակիրներէ բաղկացած հիմնադրական ժողովի մը մէջ, որ կը գումարուի գործին նախաձեռնութիւնը ստանձնող մէկ կամաւելի

(*) Մուաքի տուրքի նուազագոյնն է Եղիպտոսէն գուրս՝ 10 օմ, դրուշ (մէծի տիէն 20ի հաշուով), 2 ֆրանք 50 սանթիմ, 2 շիլին, 1/2 տոլար կամ 1 բուպի:

Անդամակիրի նուազագոյնը՝ 5 օմ, դրուշ, 1 ֆրանք 25 սանթիմ, 1 շիլին, 1/4 տոլար, կամ 1/2 բուպի: Աւելի ամսաբաժին ստորագրուողներուն համար պարտաւորիչ չէ նուազագոյնին բազմապատիկը վճարել, այլ նուազագոյնին ունէ միութիւն կամ կոտորակ աւելի կրնան վճարել, զոր օրինակ՝ 8 օմ, դրուշ, 2 ֆրանք, ևն.

ազգայիններու հրաւէրին վրայ : Մամաժողովին անդամները պէտք է ընտրուին անխափի ամէն դաւանանքի ազգայիններու մէջէն , և ուսէ յեղափոխական կամ գաղտնի կուսակցութեան պատկանելու չեն : Նորընտիր Մամաժողովի անդամները անմիջապէս մասնաւոր տոմարի մը մէջ կը ստորագրուին իբրեւ Միութեան անդամ , նշանակելով իրենց մուտքի տուրքին և ամսաբաժինին քանակութիւնը . յետոյ՝ կը ձեռնարկեն նոյն ձեւով նոր անդամներ արձանադրելու :

Մամաժողովի անդամ կրնան ըլլալ անոնք միայն որ Միութեան առնուազն 15 զրուշ (կամ վարը զրուած ցուցակին համեմատութեամբ՝ համարեց գումար մը) կը վճարեն իբրեւ ամսաբաժին :

Նոյնպէս՝ զէթ այդքան ամսաբաժին վճարող անդամները իրաւունք ունին ներկայ գանուելու տեղույն Անդամ . Ընդհ . Ժողովին :

Սակայն այս տեղերը ուր ժողովուրդին նիւթական միջոցները շատ համեստ ըլլալուն՝ ամսաբաժին առնուազն 15 զրուշ վճարող անդամներուն թիւը բաւականաչափ չէ , կեդր . Ժողովը՝ բացառաբար և առժամապէս՝ կրնայ արտօնել աւելի կամ պակաս վճարող անդամներէ կազմել Մամաժողովը . այդ պարագային՝ տեղական Անդամ . Ժողովին անդամները կը նորոգուին վիճակով :

Երեք^(*) տարին անդամ մը տեղական Մամաժողովը կիսու վին կը վերանորոգուի վիճակու :

Կատարուած հիմնադրական ընարութիւնը կամ օրինական վերանորոգումը՝ մասնաւոր և մասնամասն տեղեկագրութեամբ մը կ'ենթարկուի կեդր . Ժողովին վաւերացման :

Այս պայմանները չի լրացնող Մամաժողովները առժամեայ հանդամանք կ'ունենան , և կեդր . Ժողովը կրնայ հռչակել անոնց անվաերութիւնը՝ թէ որ ընդ փոյթ կանոնագրին արամադրութեամց համաձայն օրինաւոր գոյութիւն մը չիստանան :

Տեղական Մամաժողովներ կրնան , իրենց շրջանակին մէջ , Օժանդակ-Մամաժողովներ և մասնաւոր կամ առժամեայ Յանձնախուրներ կազմել՝ իրենց անօրինութեան և պատասխանատուութեան տակ , անոնց փոխանցելով իրենց իրաւասութիւնները՝ մասսամբ կամ ամբողջովին : Այս օժանդակ մարմինները կրնան նուազագոյն անդամակնարէն պակաս ամսաբաժինու օժանդակ մարմինները կրնան նուազագոյն

(*) Ընդհ . Ժողովը , 17 Ապրիլ 1911ին , բարեփոխած ըլլալով այս տարամադրութիւնը՝ Մամաժողովները տարին անզամ մը կիսովին պիտի վերանորոգուին:

ձանագրել , բայց ասոնք Միութեան գործօն անդամի տիտղոսը և իրաւունքը չեն վայելեր , և տարւոյն վերջը իրենց ամսաբաժիններուն համագումարը իբրեւ նուիրատուութիւն կ'արձանագրուի Միութեան հաշիւններուն մէջ :

Մամաժողովները կը ջանան նոր անդամներ գտնել , կը գանձեն մուտքի տուրքեր , անդամակիմարներ և նուիրատուութիւններ , իրենց տրամադրած ամէն միջոցներով Միութեան ծաւալմանը կ'աշխատին , կեդր . Ժողովին հրահանգները կը գործադրեն և առաջարկներ կը ներկայացնեն սոյն ժողովին : Կրնան նաև ներքին կանոնագիրներ պատրաստել իրենց տեղական գործառնութեանց մասին , Միութեան կանոնագրին տրամադրութիւններէն բնաւ չեղելու պայմանով :

Մամաժողովները պարագան բացարձակապէս զգուշանալ քաշագական վիճաբանութիւններով զբաղելէ և տեղւոյն իշխանութեանց նկատմամբ պէտք է յարգալից վերաբերում մը ունենան :

Անոնք ուղղակի և կանոնաւոր կերպով կը թվակցին կեդր . Ժողովին հետ , օրը օրին նոր անդամացուցակները կը դրկեն (նշանակելով անդամին անունը , մականունը , զբաղումը , հասցէն , ինչ-ուականական անդամակցութեան թուականը , մուտքի տուրքը և անդապէս և անդամակցութեան մարմարը) . նոյնպէս օրը օրին կեդրոնի Գանձապետին կը դրկեն մարմարնը) . նոյնպէս օրը օրին կեդրոնի Գանձապետին կը դրկեն գոյացած դրամները ինչ գումարի որ համեմին մանրամասն հաշուեցոյցներու հետ , կցելով նուիրատուներուն ցանկը (օտարականներու ցոյցներու հետ , սիրով կ'ընդունուին) : Առանց հաշուեցոյցի և որոշ նուէրները ևս սիրով կ'ընդունուին) : Առանց հաշուեցոյցի բացարութեան դրամները անձեռնմխելի դրամագլուխի բացարութեան դրամները անձեռնմխելի դրամագլուխի բացարութեան կ'անցնին : Գալով իրենց տեղական պէտքերուն՝ իրենք կը հաշուին կ'անցնին : Գալով իրենց տեղական անհրաժեշտ ծախքերուն ամբողջունուգան , պայմանաւ որ տեղական անհրաժեշտ ծախքերուն ամբողջունութիւնը Մամաժողովին անդամակիմարներուն 15% չանցնի : Վերջաւ Մամաժողովին անդամակիմարներուն անդամակիմարներուն պէս , վեց ամիսը անդամ մը , կեդր . Ժողովին կը ներկայացնեն իրենց հաշիւնները , իսկ իրենց տարեկան համարատուութիւնը կ'ընեն իրենց հաշիւնները , իսկ իրենց տարեկան համարատուութիւնը կ'ընեն 10 ամէն տարուան Դեկտեմբերին վերջը , առառաւելն մինչեւ 10 թունվար :

Տեղական Մամաժողովներու անդամները երբոր Գահիրէ պատուին , կրնան ներկայ ըլլալ կեդր . Ժողովի նիստերուն , առանց գտնուին , կրնան ներկայ ըլլալ կեդր . Ժողովի նիստ . Ժողովին իրասակայն քուէի իրաւունքի . իսկ Միութեան Ընդհ . Ժողովի կամ ուրիշ անդամ են , և կրնան ներկայ գտնուիլ կամ ուրիշ անդամ մը փոխանորդ կարգել գրաւորապէս :

Գահիրէ , 28 Մայիս 1910 Հայկական Բնեղի . Միութեան
(Անդի) Կեդր . Վարչ . Ժողով

ԺԵ. —

Ա. Հ Բ Ա Հ Ա Ն Գ

ՆՊԱՍՏՆԵՐՈՒՄ ԱԱՍԻՆ

Կեդր. Վարչ. Ժողովը նկատի առնելով նպաստի խնդրանքներուն օրըստօրէ շատնալը, և փափաքելով երաշխաւորել նպաստներու արդար և նպաստակայարմար բաշխումը, կը յայտարարէ միանգամ ընդմիշտ թէ՝ այսուհետեւ նկատողութեան պիտի չառնուին այն նպաստախնդիր գրութիւնները որոնց կցուած չէ վիճակին Ազգ. Առաջնորդարանին կամ Հ. Բ. Բ. Միութեան մերձաւորագոյն Մասնաժողովին պաշտօնական վկայագիրը։ Ասկէ զատ, այսպիսի խնդրագիրներու մէջ պէտք է որոշապէս նշանակել անունը և հասցէն այն անձին որ կ'արտօնուի գանձել զրկուելիք նպաստը, ինչպէս և դործածութեան վստահելի միջոցները։ Որովհետեւ, արուածըլլալով կարօտութեանց բազմազանութիւնը և միւս կողմէն՝ Միութեան միջոցներուն բաղդատաբար անբաւականութիւնը, կեդր. Ժողովը մասսամբ միայն կրնայ գոհացում տալ իրեն ներկայացուած խնդրանքներուն։ Այս պատճառաւ, յաճախ ստիպուած է քննութիւն կատարել ատոնց անհրաժեշտութեան մասին, կամիաւ պահանջել հարկաւոր երաշխաւորութիւններ՝ անոնց ապահով եւ կանոնաւոր գործածութեանը համար։ Ինչ որ բնականաբար յապազումներ կը պատճառէ, և երբեմն կարօտեալներ՝ ծայրահեղ թշուառութեան մատնուած՝ անմիջական օգնութենէ զուրկ կը մնան։

Անօգուտ չէ նաև յայտարարել թէ պէտք է զրկուած նպաստներուն ստացականները անմիջապէս կեդր. Ժողովին յդել, եւ կարելի եղածին չափ շուտով տեղեկագրել նպաստին գործածութեան յարակից բոլոր մանրամանութիւնները և փութացնել բաշխման ցուցակները — բոլոր պատասխանատու մարմիններու պաշտօնական ստորագրութիւններովը և կնիքներովը վաւերացուած։ Հակառակ պարագային՝ կեդր. Ժողովը պիտի չի վստահի այդ տեղը նոր նպաստներ դրկել, մինչեւ որ մանրակրկիտ քննութեամբ

չի համոզուի թէ արդէն զրկուածները խղճմորէն գործածուած են իրենց կանխորոշ բուն նպաստակին։ Այս առթիւ նպաստընկալ համայնքներու և հաստատութեանց կը յայտարարուի նաև թէ՝ Հայկական Ընդհանուր Արքային ընկերութիւն մը ըլլալով, զրկուած նպաստները կեղքը. Ժողովին հրահանգին համաձայն պէտք է բաշխուին, լայնախոն և արդութիւն հարադարձան ոգիով՝ առանց դաւանանքի խտրողութեան, և մասաշարադարձան պէտք է անոնք զերծ և անկախ պահուին՝ ուեէ կուսակցաւանդ պէտք է անոնք զերծ և անկախ պահուին՝ ուեէ կուսակցաւանդ ազդեցութենէ և դիտումնաւոր ձեռնմխութենէ։

Գաղկերէ, 25 Մայիս 1910

(ԱՅԼԻ)

Հայկական Ընդհանուր Արքայի կեղր. Վարչ. Ժողով

ԺԶ. —

Ա. Հ Բ Ա Հ Ա Ն Գ

ՆՊԱՍՏՆԵՐՈՒՄ ԱԱՍԻՆ

Կեդր. Վարչ. Ժողովը, հաստատելով իր 25 Մայիս 1910 թուական Ա. Հրահանգը, նպաստներու խնդրանքին և գործածութուական Ա. Հրահանգը, նպաստներու խաւելուածական զեկոյցը ևս կ'ընէ։ Թեան մասին հետեւեալ յաւելուածական մասին։

Նպաստախնդիր մարմինները պարտին՝
ա) խնդրանքին կցել պէտք եղած վկայագիրները,
բ) որոշ և մանրամասն տեղեկութիւններ տալ՝ նպաստի գործածման եղանակին մասին,
գ) ճշգել թէ նպաստը ո՞ր պատասխանատու մարմինին
միջոցաւ պիտի գործածուի,
դ) ճշգել թէ նպաստը իր տեղը շուտով և ապահով հասնակել նպաստը իր տեղը շուտով և ապահով հասցելու էն դիւրին և էն աժան ձեւն ու միջոցը, ցընելու էն դիւրին և էն աժան ձեւն ու միջոցը, մանր գումարներով բաժանէք թէ մանտա-փոսթ, մանր գումարներով բաժանէք թէ մէկ կտոր, ուղարկել վճարելի Պօլիս, նուած թէ մէկ կտոր, լուղարկել վճարելի Պօլիս, լոնտօն թէ տեղւոյն վրայ։

Այս պայմանները չի լրացնող խնդրագիրները նկատողութեան պիտի չառնուին :

Նպաստընկալ մարմինները պարտին՝

ա) անմիջապէս պաշտօնական ստորագրութիւններով եւ կնիքով ստացագիր մը դրկել,

բ) նպաստին ստացումէն մինչեւ մէկ ամիս՝ գործածման մանրամասն վաւերագիրը կամ բաշխման պաշտօնական ցուցակը դրկել,

գ) նպաստը որոշուած նպատակէն և տրուած հրահանգէն տարբեր կերպով ամեննեւին չի գործածել, և ի հարկին այդ մասին ոեւէ դիտողութիւն՝ ստացագրին հետ մէկտեղ անմիջապէս կեդր. ժողովին ներկայացնել կանխաւ :

Այս պայմանները չի յարգող մարմիններէն գալիք խնդրագիրները այլեւս նկատողութեան պիտի չառնուին :

Ասկէ զատ, կեդր. ժողովը իրեն կը վերապահէ զանցառութեանց կամ զեղծումներու մասին պէտք եղածը ընել :

Գահիրէ, 20 Յունիս 1910

(ԿԵԴՐ) Հայկական Հնդի. Միութեան

ԿԵԴՐ. Վարչ. Ժողով

ԺԷ. —

Ա. Շ Բ Ա. Բ Ե Բ Ա. Կ Ա Ն

Մ Ա Ս Ն Ա Ժ Ո Վ Ա Ն Ե Բ Ո Ւ Ի Ն Ո Ւ Ղ Ղ Ո Ւ Ա Ծ

Հայկ. Բնդէ. Միութեան Մասնաճիւղներէն ոմանց արդար հետաքրքրութեան միանգամ ընդ միշտ գոհացում տալու և ուեւթիւրիմացութեան տեղի չի ձգելու նպատակաւ, կեդր. Վարչ. Ժողովս կը ծանուցանէ թէ՝ կանոնագրին Յ րդ Յօդուածին համաձայն, ամէն ազգային կրնայ անդամակցիլ Միութեան, ինչ սեռի կամ ինչ կրօնքի, և ինչ դասակարգի կամ կուսակցութեան որ պատկանի,

առանց խտրութեան, կը բաւէ որ խոստանայ յարգել Միութեան հիմնական կանոնագիրը եւ կանոնաւորապէս հատուցանել յանձն առած անդամավճարները, բնականաբար անդամակցութեան ընդունելութիւնը տեղւոյն Մասնաժողովին օրինական քուէարկութեան ենթարկուելու պայմանաւ, որպէս զի ի հարկին կարելի ըլլայ արենթարկուելու պարագաներին կասկածելի նկատուած անարժան անձերու գլուխ բարոյականնին կասկածելի նկատուած անարժան անձերու մուտքը Ընկերութեան շարքերուն մէջ :

Ասկէ զատ, կեդր. Վարչ. Ժողովս հարկ կը տեսնէ բացատրել նաև կանոնագրին 10 րդ Յօդուածին (ա. հատուած, 2 րդ տուն) իմաստը, որ կերեւայ թէ երկդիմի թուած է ոմանց :

Երբ Միութիւնը հիմնուեցաւ, 1906ին, օսմաննեան հայրենիքը կը գտնուէր բռնակալ ոէժիմի մը լուծին տակ, և այն ատեն մեր ազգին մէջ գոյութիւն ունէին յեղափոխական քօմիթէներ :

Նկատի առնելով որ Միութեան նպատակին գործադրութեան գլխաւոր գետինը թուրքիա է, նկատի առնելով մանաւանդ որ մեր Ընկերութիւնը քաղաքակոն ուեւէ բնոյթ չունի և զուտ բարեգործնկերութիւնը քաղաքակոն մըն է, բնական էր որ մասնաւոր տրամադական ձեռնարկութիւն մըն է, բնական էր որ մասնաւոր տրամադայի մը թոյլ չի տրուէր այդ քօմիթէներուն պատկանող գործիչներուն՝ անդամակցիլ կեդր. Վարչ. Ժողովին և Տեղական գործիչներուն՝ անդամակցիլ կեդր. Վարչ. Ժողովին :

Այսօր Սահմանադրութեան հոչակումովը թէեւ Թուրքիոյ մէջ ազատութեան ոէժիմ մը հաստատուած է, բայց ցորքան ազգային-քաղաքական պայմանները հիմնովին չի փոխուին, եւ մանաւանդ կանոնագրին վերոիշեալ տրամադրութիւնները նոր պահանջներու համաձայն չի վերաբննուին, բնական է նաև որ միեւնոյն արգելքը մնայ տակաւին :

Սակայն ուղիղ պիտի չըլլար, և Միութեան հիմնագիրներուն առաջին մասձումին ալ հակառակ պիտի ըլլար, այդ ըստ ինքեան ժամանակաւոր արգելքին տակ սխալ նշանակութիւն մը, ակներեւ ժամանակաւոր արգելքին տակ սխալ նշանակութիւն և վարողներուն անկասըլլալով այս Ընկերութիւնը հիմնողներուն և վարողներուն անկասըլլալով այս Հայկական պիտի չըլլարութիւնը. այնպէս որ հիմա հարկ է լայնակածօքն բարի դիտաւորութիւնը. այնպէս որ հիմա հարկ է լայնակածօքն մտայնութեամբ մը աշխատիլ աւելի ևս չի սեղմելու այդ արգելքի չընդհանրացնելու նորակազմ և այլազան ընկերակցութեանց նկատմամբ ևս :

Հետեւաբար կեդր. Վարչ. Ժողովս յայտարարելով հանդերձ

թէ Միութիւնը չիկրնար ասպարէզ ըլլալ կրօնական, դասակարգային և քաղաքական գործունէութեանց, և Հայութեան մտաւորական և տնտեսական բարելաւումին կինսաւէտ գործին միայն նուիրուած՝ ձեռնպահ կը մնայ կուսակցական ինչպէս եւ անձնական բուլոր խնդիրներէն և խտիրներէն, սակայն չի կրնար արգիլել իր վարիչները և անդամները, իրեւ ազատ քաղաքացի, Միութեան շըրջանակէն դուրս, և անոր ընդհանուր շահերուն դէմ նոյն իսկ անուղղակի չի վնասելու պայմանաւ, յարելէ այս կամ այն գաղափարին կամ վարդապետութեան:

Գահիրէ, 25 Դեկտ. 1910

(Անիք)

Հայկական Բնդի. Միութեան

Կեդր. Վարչ. Ժողով

Ժ. —

Բ. Շ Թ Ջ Ա Բ Ե Բ Ա Կ Ա Ն

Մ Ա Ս Ն Ա Ժ Ո Վ Ն Ե Ր Ո Ւ Ն Ո Ւ Ղ Ղ Ո Ւ Ա Ծ

Ցաւալի է որ Հայկական Միութեան նման զուտ բարեսիրական չաստատութեան մը նպաստակն ու գործն անգամ խեղաթիւրող և անոր նկատմամբ Ժողովուրդին ցոյց տուած բարձր համարումը խախտարող ալ կը գտնուին: Եթէ Ազգին օգտակար ըլլալու արամադրուած մեր սուղ ժամանակը իրաւունք չունինք վատնելու չարամիտ զրոյցները հերքելով, սակայն, սիսալ հասկացողութեան առիթ չիտալու համար, հարկ կը զգանք միանգամ ընդ միշտ յայտարարելու թէ Միութիւնը կուսակցական գործերէ բուլորովին ձեռընպահ կը մնայ և ազգային-քաղաքական պայքարներուն երբեք չի մասնակցիր: Հետեւաբար, անտեղի է և անհիմն այն զրոյցը, որուն յետին

նպատակն է միամիտները վրդովել: Թէ «Միութիւնը ազգային թերթի մը հարիւր ոսկիի գումար մը տրամադրեր է անցած տարի, կուսակցական պայքարը քաջալերելու համար, ևն. .»

Ինչպէս յայտնի է, Միութեան կանոնագրին առաջին Յօդուածին մէջ որոշապէս բացատրուած նպատակներէն մին ալ «օգտակար հրատարակութիւնները քաջալերել է:» Արդ, Ժողովս, այս սկզբունքէն մեկնելով, մանաւանդ նկատի առնելով որ հայաբնակ գաւառներու շատ մը անկիւններէն լրագրական նպաստներ կը խնդրուին, անցեալ տարի միմիայն Ե. Զ. 9653, 55 ի գումար մը յատկացուց 8 լրագրի և Յ հանդէսի, մէկ տարեկան 217 բաժանորդագրութեանց լրագրի և Յ հանդէսի, մէկ տարեկան 217 բաժանորդագրութեանց համար, ի նպաստ կրթական և բարենպատակ ծանօթ հաստատութեանց՝ որոնց ցուցակը Միութեանս անդամներուն տրամադրութեան տակ է: Փափաքելի է անշուշտ որ Միութիւնը հետզհետէ ի վիճատակ կի ըլլայ յարատեւօրէն և աւելի լայն սահմանի մը մէջ կիրարկելու իր նպատակին այս շահեկան մասը, և Ժողովս տարակոյս չունի որ այս բարի տնօրինութիւնը Միութեան բազմաթիւ անդամներուն այս համակիւններուն գոհունակութիւն միայն առթած է:

Դժբախտաբար ամէնէն բարի գործերն անգամ իրենց հակառակորդները ունին մեր մէջ: Այսպէս՝ երբեմն դիտումնաւոր կառակորդները ունին մեր մէջ: Այսպէս՝ երբեմն դիտումնաւոր կառակորդներ կ'ուղղուին Միութեան հասցէին. բայց Ժողովս, իր անխծրծան ցոյց տուած անվերապահ վստահութեամբը գորացած, դամներուն ցոյց տուած անվերապահ վստահութեամբը և շահադիր կ'ըլլայ Միութեանց կասելու կը կատարէ իր պարտքը և շահադիր կ'ըլլայ Միութեան բարձր նպատակը կէտ առ կէտ գործադրելու, օրը օրին ութեան բարձր նպատակը կէտ առ կէտ գործադրելու, իր յարգելի անդամներ մանրամասն եւ վաւերական հաշիւ տալով իր յարգելի անդամներ ունին, որոնց կը պարաի Միութիւնս իր գոյութիւնը և որոնց միայն համարատու է ըստ կանոնագրի՝ իրեւ ազգանուէր — մասնաւոր չեղողները:

Գահիրէ, 31 Դեկտ. 1910

(Անիք)

Հայկական Բնդի. Միութեան

Կեդր. Վարչ. Ժողով

ԺԹ. —

Գ. Շ Ր Ջ Ա Բ Ե Ր Ա Կ Ա Ն

Մ Ա Ս Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ Ն Ե Ր Ո Ւ Ն Ո Ւ Ղ Ղ Ո Ւ Ա Ծ

Հայկական Ընդհ. Միութեան վեցերորդ տարեշրջանի սկզբանաւորութեան առթիւ՝ կեզր. Վարչ. ժողովս ուրախութեամբ կը ծանուցանէ թէ վերջին ութամսեայ շրջանին մէջ — Մայիս-Դեկտեմբեր 1910 — յուսացուածէն աւելի փայլուն արդիւնք մը գոյացած է. այնպէս որ կարելի է աներկիւղ ըսել թէ Միութիւնը հաստատ հիմքու վրայ դրուած է և իր հսկայաքայլ յառաջդիմութեան համար հարկաւոր միջոցները երաշխաւորուած են:

Մօտերս գումարելի Ընդհանուր ժողովին վերապահելով ժողովիս ընդարձակ տեղեկագիրը, որուն մէջ անցնող շրջանին համարատութիւնը պիտի մանրամասնուի և աւելի որոշ չափով մը ճշգուած պիտի ըլլայ իւրաքանչիւր Մասնաճիւղի ուրոյն գործունէութիւնը, առայժմ կը գոհանանք հաստատելով թէ ձեռք բերուած արդիւնքը կը պարափնք այնքան ազգին անվերապահ վըստահութեանը՝ որքան Մասնաճիւղներու եռանդուն գործակցութեանը:

Սակայն երբ մէկ կողմէն պարտաւոր կը զգանք մեր չնորհապարտ զգացումները յայտնել Մասնաժողովներուն իրենց գնահատելի աշխատութեանց համար, միւս կողմէ անկեղծութիւնը պարտք կը դնէ մեր վրայ ցաւ յայտնել մէկ քանի Մասնաճիւղներու մասին — բարեբախտաբար խիստ սակաւաթիւ —, որ իրենց կազմութենէն իվեր գորեթէ ոչ մէկ արդիւնք ներկայացուցին:

Գալով սկսուած տարեշրջանին, Միութեանս բարգաւաճումին աւելի մեծ զարկ մը տալու միտումով կը փութանք կոչում ընել Միութեանս Մասնաճիւղներուն եւ տեղական իւրաքանչիւր անդամին՝ ինչպէս և առհասարակ բոլոր լարի կամեցողութիւններուն՝ կը դապատելու իրենց ազնիւ ջանքերը, որպէս զի կարելի ըլլայ

հասցնել այս ազգանուէր հաստատութիւնը այն բարձրութեան որուն արժանի է, կարենալ իրագործելու համար իր ընդարձակ ծրագիրը:

Աւելորդ չէ այս առթիւ ևս յիշեցնել Օժանդակ Մասնաժողովներու, Տիկնանց Յանձնաժողովներու և Օժանդակ Մասնախումբներու կազմութեան անվիճելի կարեւորութիւնը, նաև Միութեան նպատակը և գործը ժողովուրդին բացատրելու և համակրանքի հոսանքը ընդլայնելու համար սարքուած Հրապարակային ժողովներու և Մասնաճիւղային Հանդէմներէն անոնք որթիւնը: Անշուշտ Միութեանս տեղական անդամներէն անոնք որթիւնը կարողութեամբ օժանուած են՝ պիտի չի դանդաղին բանախուու կարողութեամբ մէջ խօսելու և այս կերպով ծառայելու Միութեանս տարածումին:

Նկատի առնելով որ զրկուած անդամացուցակներու մէջ նշանակուած անդամներու թիւը ընդհանրապէս բնաւ չի համապահակուած անդամներու տեղային բնակչութեան համեմատաբար շատուր թիւն, մենք կը սիրենք յուսալ որ իւրաքանչիւր Մասնաժողով, բարի մըրցակցութեամբ մը ուրկէ Միութիւնը պիտի օգտուի, նոր թափով ցանութիւնը պիտի օգտուի, նոր թափով առնեմը գործի պիտի սկսի, իր մտահոգութեան գլխաւոր առարկան ընելով անդամներուն թիւը բազմացնել և իր գործունէութեան սահմանական ընդամները ընդարձակել՝ իրեն յանձնուած պաշտօնին աւելի լայն ըմբռնումով մը:

Անօգուտ չըլլայ նաև յանձնարարել կրկին անդամ որ նկատի առնելով Միութեանս համազգային կազմը և անխտրական սկզբանեւութիւնը, մեծապէս նպատակայարմար է և օգտակար՝ տեղական և այլ օժանդակ մարմիններու կազմութիւնը կատարել զանազան դաւանանքներու պատկանող ազգայիններու անդամակցութեամբ:

Մասնաւորապէս կը ինդրենք թրքահայ Մասնաճիւղներէն՝ իրենց շրջանակին կարեւորագոյն կարօտութիւնները քննել և երբեմն տեղեկագրել ժողովիս՝ այս կերպով դիւրացնելու համար նպաստաւութիւնը՝ մարմիններուն այսքան հեռուէն օգնելու կնճռալից գործը, ինչպէս և մանաւանդ՝ զրկուած նպաստներուն բարւոք գործածութեան մասին ստանձնել վերին հսկողութեան հոգը և տեղոյն վրայ կատարել ուղղակի հակակլիու:

Առիթէն օգուտ կը քաղենք յիշեցնելու թէ մուտքի տուրքերը և նուրիատուութիւնները միշտ կանխիկ գանձելի են. նաև

թէ՝ միայն մուտքի տուրք կամ միմիայն անդամաբաժին, ինչպէս եւ
որշուած սակէն պակաս մուտքի տուրք կամ անդամաբաժին վճա-
րող ազգայինները չեն կրնար իրեւ անդամ արձանագրուիլ, այլ
պարզապէս կը նկատուին նուիրատուներ :

Գահիք, 25 Յունիլար 1911

(Անիք)

Հայկական ղնդի. Միութեամ

Կեդր. Վարչ. Ժողով

Ի . —

ԿՈՉ — ՅՈՅՑԱԳԻՐԻ

«ՄԻՈՒԹԻՒՆ» Ա. Մ. Ս. Ա. Թ. Ե. Բ. Ի.

Յորմէհետէ Հայկ. Բնդէ. Միութիւնը ստացած է յարածուն
ծաւալում մը՝ բնագաւառի ինչպէս և արտասահմանի մէջ, մասնա-
յատուկ թերթի մը պէտքը հետզհետէ աւելի զգալի եղած է. և այդ
պէտքը ամէն օր կը մատնանշուի մեզի մէկէ աւելի Մասնածիւղնե-
րու կողմէ :

Կեդր. Ժողովս, համոզուելով այդպիսի օրկանի մը օգտա-
կարութեանը, սկզբունքով ընդունած է «Միութիւն» անունով առ
այժմ ամսօրեայ հանդէսի մը հրատարակութիւնը : Ատիկա պիտի
ունենայ կրկին առաւելութիւն, նախ՝ Միութեան նպատակին գոր-
ծադրութիւնը, որպէս համրօգուտ գիտելիքներու ընդհանրացում,
ու յետոյ՝ Միութեան գործունէութեան համարատուութիւնը, օրը
օրին՝ կանոնաւոր և մանրամասն :

Բայց որպէս զի այս ձեռնարկը՝ գէթ ներկայիս մէջ՝ բեռ
չըլլայ Միութեան մնտուկին վրայ, քանի որ իր համեստ հասոյթ-
ները տակաւին ոչ իսկ կը բաւեն անհրաժեշտ ու անմիջական նը-

պաստներուն, կեդր. Ժողովս՝ իր որոշումը գործադրելէ առաջ՝
յարմար սեպած է դիմուլ Միութեան բոլոր Մասնածիւղներուն,
ներկայացուցիչներուն և առաջարարակ համակիրներուն, համեմա-
տար թէ ո՛ր չափով կարելի պիտի ըլլայ ապահովել ծախքերը,
ըստ այնմ վերջնականապէս գործի ձեռնարկելու համար :

Առաջադրուած հրատարակութիւնը՝ ինչպէս ըսինք՝ պիտի ըլ-
լայ ամսաթերթի ձեւով, հիմակուհիմա գէթ տասնլվեց էջ, տարեկան
6 ֆրանքի բաժանորդագրութիւնով : Ազգային ականաւոր գործնե-
րու սիրայօժար աշխատացութիւնը արդէն իսկ ապահովուած է:

Հանդէսին ուղղութիւնը պիտի ըլլայ՝ յօգուտ ժողովուրդին,
բացարձակապէս համաձայն Միութեան սկզբունքներուն և կեդր.
Վարչութեան հայեացքներուն։ Հաւատարիմ իր անունին ու կոչու-
մին, «Միութիւն»ը երբեք պիտի չի զրադի կրօնական և քաղաքա-
կան, ինչպէս և անձնական ու կուսակցական խնդիրներով . միշտ
կան, ինչպէս և անձնական ու կուսակցական խնդիրներով . միշտ
կան, կամ պիտի աշխարհի ամէն կողմ ցրուած Հայութեան զաւակնե-
կապը ըլլալ աշխարհի ամէն կողմ ցրուած Հայութեան զաւակնե-
կապը ժողուարականին ու շինա-
րապէս ժողովուրդին ամէն խաւերուն, մտաւորականին ու շինա-
րապէս ժողովուրդին ամէն խաւերուն, միութեան կամ պիութեան
կամին, գիտունին և բանւորին : Անիկա պիտի աշխարհի միութեան կամ
կապը ըլլալ աշխարհի ամէն կողմ ցրուած Հայութեան զաւակնե-
կապը ժողուարականին ու շինա-
րապէս ժողովուրդին պիտի ըլլայ՝ գրական, գիտական, գեղարուես-
պարունակութիւնը պիտի ըլլայ՝ գրական, գիտական, առողջապա-
տական, ճարտարագործական, գիտական, առողջապատական, առողջապա-
տական և մանկավարժական, մէկ խօսքով՝ Միութեան գերագոյն
հական և մանկավարժական, մէկ խօսքով՝ Միութեան գերագոյն
հական և մանկավարժական, մէկ թէ այսպիսի անկախ հրատարակութեան
ձգտումներուն արտայայտութիւնը եղող գրութիւններ : Ու վերջապէս
մէկ թերթին վերջին մասը պիտի ըլլայ տեսակ մը տեղեկա-
ամէն մէկ թերթին միամսնական միամսնական գործունէութեան . մասնաւորա-
գրութիւն Միութեան միամսնական գործունէութեան . հաշուեկը ինքները
պէս պիտի հրատարակուին անդամացուցակները, հաշուեկը ինքները
պէս պիտի հրատարակուու կողմէ հասած կարեւոր նամակները :
և Մասնածողովներու կողմէ հասած կարեւոր նամակները :

Տարակոյս չունինք թէ այսպիսի անկախ հրատարակութեան
մը օգտակարութիւնը պիտի չիվրիպի ձեր հոգածու նկատառումէն,
մը օգտակարութիւնը պիտի չիվրիպի ձեր ինդիքնք ձենէ այժմէն մեր առաջա-
և մենք այդ յոյսով է որ կը ինդիքնք ձենէ այժմէն մեր առաջա-
և մենք այդ յոյսով է որ կը կցնենք կը կցնենք բաժանորդագր-
կաւ . ատոր համար է որ ներկայ կոչին կը կցնենք բաժանորդագր-
կաւ . ատոր համար է որ ներկայ կոչին կը կցնենք թէ Միութեան մէն
րութեան յանձնառագիր մը, զոր կը յուսանք թէ Միութեան մէն

մի անդամն ու բարեկամը ստորագրելով պիտի փութայ ձեզի յանձնել :

Հաճեցէք մինչեւ 15 օր կեդր. ժողովիս զրկել ստորագրուած յանձնառագիրները, և այս առթիւ ներկայացնել մեզի ձեր թելաշը դրութիւնները՝ զոր մեր կողմէ պիտի ջանանք նկատի առնել գործադրութեան պահուն :

Կանխաւ յայտնելով ձեզի մեր անկեղծ չնորհակալիքը՝ ակընկալուած ձեռնտութեան համար,

Խորին յարգանքով՝

Դահիրէ, 30 Ապրիլ 1911	Ի դիմաց Կեդր. Վարչ. Ժաղովի (Անիք)
	Ատենադիր Աթենապես
	Վ. ՄԱԼԵԶԵԱՆ Արթիւ ՓԱՇԱ ԵՍԳՈՒՊ

ԻԱ. —

ԿՈՉ

ԿԵԴՐՈՆԾԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ Ի ՆՊԱՍ

Հայկական Ընդհ. Միութեան բազմադիմի նպատակին մէջ գլխաւոր տեղ մը կը գրաւէ միտքի մշակութեան բաժինը։ Այս Ընկերութիւնը իր հիմնարկութենէն ի վեր այդ ուղղութեամբ աշխատեցաւ, և ինչպէս արդէն իր վերջին Տեղեկագրէն կ'երեւայ՝ այժմ իր գլխաւոր ուշագրութիւնը դարձուցած է կրթական գործին։

Բայց այս գործունէութեան մէջ պակաս մը կար, զոր կեդր. Վարչ. Ժողովս վերջերս փափաքեցաւ լրացնել՝ հիմնելով իր կեդրոնատեղւոյն մէջ «Կեդրոնական Գրադարան» մը։ Այս հաստատութեան նպատակը պիտի ըլլայ Հայ ազգին և աշխարհին վրայ խօսող ձեռագիր ու տպագիր ամէն լեզուէ հեղինակութիւններ և հայ կրթութեան ծառայող ամենազգի դպրոցական դասագիրքներ հաւաքել, և ատոնց կրկին օրինակները յատկացնել բնագաւառի կարօտ Մատենադարաններուն և Ընթերցատուններուն։

Այսպիսի առաջադրութեան մը օգտակարութիւնը վեր հանեւ պէտք չենք զգար, և տարակյա չունինք որ մասնաւորապէս Հայութեան մտաւորական դասակարգը մեզի պիտի չիզլանայ իր անվերապահ օժանդակութիւնը՝ այս ձեռնարկին յաջողութեանը համար։

